ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

375010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փ. 5

№ 7/90100119

«20» 01 2023թ.

ՀՀ ազգային ժողովի նախագահին

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու մասին

Պաշտոնեական դիրքը չարաշահելու և առանձնապես խոշոր չափերով վատնում կատարելու դեպքերի առթիվ ՀՀ ԶԿԴ զինվորական ծառայության դեմ ուղղված ՀԿԳ քննության բաժնում 2019 թվականի փետրվարի 22-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 90100119 քրեական գործը:

2019 թվականի փետրվարի 28-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից նշված քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտին:

Թիվ 90100119 քրեական գործի նախաքննության ընթացքում բացահայտվել են առանձնապես խոշոր չափերով գույքի խարդախության և հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքն օրինականացնելու (փողերի լվացում), ինչպես նաև դրանց կատարումը կազմակերպելու և դրանց կատարմանն օժանդակելու վերաբերյալ առերևույթ հանցագործությունների դեպքեր, որոնց առթիվ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, ինչպես նաև 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի ու 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով 2022 թվականի ապրիլի 22-ին հարուցվել է թիվ 58213922 քրեական գործը, որի նախաքննության կատարումը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից հանձնարարվել է ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտին:

2022 թվականի ապրիլի 25-ին կայացված որոշմամբ հիշյալ քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է 90100119 համարի ներքո:

Քրեական վարույթով ձեռք բերված ապացույցների բավարար համակցությամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքներ կատարելու համար 2022 թվականի ապրիլի 29-ին կայացվել է որոշում Վահե-Վասկեն Յաքուբյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Մեղադրյալ Վահե Յաքուբյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, իսկ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը:

2023 թվականի հունվարի 19-ին թիվ 90100119 քրեական վարույթով հսկող դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Գորիկ Հովակիմյանն առաջարկություն է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու միջնորդությամբ ՀՀ Ազգային ժողով դիմելու վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազությունում թիվ 90100119 քրեական վարույթի ուսումնասիրությամբ պարզվել է, որ կատարված քննությամբ ձեռք են բերվել բավարար փաստական տվյալներ, որոնք հիմք են տալիս ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին) և 308-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին), այն է՝

Սեյրան Մուշեղի Օհանյանը 2008 թվականի ապրիլի 14-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում, զբաղեցնելով ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը և կառավարելով ՀՀ պաշտպանության նախարարությունը, պարտավոր լինելով ապահովել նախարարության խնդիրներից բխող գործառույթների իրականացումը և պատասխանատու լինելով պաշտպանության բնագավառում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի և հեռանկարային զարգացման համար, իրավասու լինելով ՀՀ անունից հանդես գալու համար տալ լիազորագրեր, հաշվետու լինել ՀՀ նախագահին, ՀՀ կառավարությանը և ՀՀ վարչապետին, ՀՀ պաշտպանության, այլ բնագավառների բարձրաստիճան պաշտոնատար անձանց, տնօրինել իրեն վստահված ՀՀ պետական գույքը, պետական մարմնում մշտապես իրականացնելով կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ, հանդիսանալով պաշտոնատար անձ, խմբային շահերից ելնելով, պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, նաև չի կատարել ծառայողական պարտականությունները, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, ինչպես նաև՝ ՀՀ պատկանող ՀՀ

պաշտպանության նախարարության հաշվեկշռում հաշվառված և ի պաշտոնե իրեն վստահված առանձնապես խոշոր չափերի գույքն ապօրինի, անհատույց և շահադիտական նպատակով դարձրել է այլ անձինը՝ այդ կերպ վատման եղանակով հափշտակելով այն:

Այսպես.

ՀՀ սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

2. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը»:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը գլխավոր դատախազը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Ազգային ժողովի նախագահն այդ մասին անմիջապես տեղեկացնում է միջնորդագրում նշված պատգամավորին, իսկ դրա անհնարինության դեպքում հանդես է գալիս հայտարարությամբ: Միջնորդագրին կցվում է պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

(...)»:

2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝

« 1. Մինչդատական վարույթի ընթացքում վերադաս դատախազը՝

(...)

9) հսկող դատախազի առաջարկությամբ դիմում է իրավասու մարմիններ՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու միջնորդությունով.

(...)»:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրացնելը կամ վատնելը՝ հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունը զգալի չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) խոշոր չափերով,

(...)

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից,2

3) (3-րդ կետն ուժը կորցրել է 23.05.11 ՀՕ-143-Ն)

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա»:

Նույն օրենսգրքի 308-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը)՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն գլխում պաշտոնատար անձինք են՝

1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք.

2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

(...)»:

2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով հանձնված գույքի հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Վստահված գույքը հափշտակելը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Վստահված գույքը հափշտակելը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կամ

3) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով»:

Նույն օրենսգրքի 441-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը

չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով,

2) պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս,

3) կատարվել է զենք կամ հատուկ միջոց օգտագործելով,

4) կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

5) անզգուշությամբ առաջացրել է այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով՝ գույքային վնասի դեպքում էական է համարվում խոշոր չափերի գույքային վնասը»:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և դիտարկումների լույսի ներքո վերլուծելով թիվ 90100119 քրեական վարույթի նյութերը պետք է արձանագրել, որ նախաքննության արդյունքում ձեռք են բերվել փոխկապակցված, վերաբերելի, թույլատրելի, հավաստի ապացույցների ամբողջություն առ այն, որ

Սեյրան Մուշեղի Օհանյանը, 2008 թվականի ապրիլի 14-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում, զբաղեցնելով ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը և կառավարելով ՀՀ պաշտպանության նախարարությունը, պարտավոր լինելով ապահովել նախարարության խնդիրներից բխող գործառույթների իրականացումը և պատասխանատու լինելով պաշտպանության բնագավառում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի և հեռանկարային զարգացման համար, իրավասու լինելով ՀՀ անունից հանդես գալու համար տալ լիազորագրեր, հաշվետու լինել ՀՀ նախագահին, ՀՀ կառավարությանը և ՀՀ վարչապետին, ՀՀ պաշտպանության, այլ բնագավառների բարձրաստիճան պաշտոնատար անձանց, տնօրինել իրեն վստահված՝ ՀՀ պետական գույքը, այն է՝ պետական մարմնում մշտապես իրականացնելով կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ, հանդիսանալով պաշտոնատար անձ, խմբային

շահերից ելնելով, պաշտոնական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, չի կատարել ծառայողական պարտականությունները, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, ինչպես նաև՝ ՀՀ պատկանող՝ ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում հաշվառված և ի պաշտոնե իրեն վստահված առանձնապես խոշոր չափերի գույքն ապօրինի, անհատույց և շահադիտական նպատակով դարձրել է այլ անձինը՝ այդ կերպ վատման եղանակով հափշտակելով այն:

Այսպես.

«Ջեներալ Տրանսուոլդ Մենյուֆեքչրինգ Քամփնի» ՓԲ ընկերության սնանկության վարույթով հայտարարված աճուրդի շրջանակներում պարտատեր ՀՀ պաշտպանության նախարարության՝ ի դեմս նախարար Սեյրան Մուշեղի Օհանյանի կողմից լիազորված, ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի խորհրդական Պավել Ասծատուրի Շադյանը 2011 թվականի դեկտեմբերի 11-ին մասնակցել է անշարժ գույքերի աճուրդին և հանդիսանալով միակ մասնակիցը՝ ճանաչվել է հաղթող:

2012 թվականի դեկտեմբերի 16-ին «Ջեներալ Տրանսուոլդ Մենյուֆեքչրինգ Քամփնի» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Կարեն Ռոմիկի Ասատրյանի և ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից լիազորված Պավել Շադյանի միջև կնքվել են «Անշարժ գույքի տարաժամկետ առուվաճառքի» վերաբերյալ թվով երեք պայմանագրեր, համաձայն որոնց՝ ՀՀ պաշտպանության նախարարությունն ընդհանուր 1,310,000,000 (մեկ միլիարդ երեք հարյուր տասը միլիոն) ՀՀ դրամով գնել է Երևան քաղաքի Շենգավիթ, Բագրատունյաց 81 (արժեքը՝ 1,108,000,000 ՀՀ դրամ), Երևան քաղաքի Շենգավիթ, Բագրատունյաց 81/1 (արժեքը՝ 160,000,000 ՀՀ դրամ) և Երևան քաղաքի Էրեբունի, Արին-Բերդի 3-րդ նրբանցքի 2/1 (արժեքը՝ 186,000,000 ՀՀ դրամ) հասցեների անշարժ գույքերը՝ որպես պայմանագրային պարտավորությունից բխող պահանջ ընդունելով նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածով ամրագրված դրույթը, համաձայն որի՝ ապառիկ վաճառված ապրանքը գնորդին հանձնելու պահից մինչև դրա համար վճարելը համարվում է վաճառողի մոտ գրավ դրված՝ ի ապահովումն գույքի համար վճարելու գնորդի պարտավորության կատարման, եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով:

Դրանից հետո Վահե-Վասկեն Յաքուբյանը, հանդիսանալով կառուցապատմամբ զբաղվող «Գլենդել Հիլզ» ՓԲ և դրան փոխկապակցված այլ ընկերությունների փաստացի սեփականատերը, պաշտոնատար անձանց հետ հանցակցությամբ, նպատակադրվել է խարդախությամբ հափշտակել սեփականության իրավունքով ՀՀ պատկանող՝ Երևան քաղաքի Շենգավիթ, Բագրատունյաց 81, Երևան քաղաքի Շենգավիթ, Բագրատունյաց 81/1 և Երևան քաղաքի Էրեբունի, Արին-Բերդի 3-րդ նրբանցքի 2/1 հասցեների անշարժ գույքերը (այսուհետ՝ Անշարժ գույքեր):

Հանցանքի կատարումը դյուրին դարձնելու նպատակով ՀՀ բարձրագույն պաշտոն զբաղեցրած անձինք մանրակրկիտ պլանավորել են կատարվելիք գործողություններն ու դրանց հաջորդականությունը, հանցանքի կատարման համար ստեղծել բարենպաստ պայմաններ, ընտրել հանցակիցների, ովքեր, հաշվի առնելով միմյանց՝ պաշտոնից բխող

բարձր հեղինակությունն ու դիրքը՝ պատրաստակամություն են հայտնել անշեղորեն կատարելու գույքի հափշտակությանն ուղղված, միմյանց փոխլրացնող գործողությունները, այդ կապակցությամբ տրված հրահանգներն ու հանձնարարությունները:

Պլանավորված հանցագործությունը քողարկելու, դրան օրինական տեսք հաղորդելու և բացահայտման ռիսկերը նվազագույնի հասցնելու նպատակով հանցակիցներն օգտագործել են փաստացի Վահե Յաքուբյանին պատկանող, սակայն այլ անձի անվամբ գրանցված «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն)՝ Ընկերության տնօրեն Աշոտ Մհերի Հովհաննիսյանին հանձնարարելով ՀՀ պաշտպանության նախարարությանը պատկանող հիշյալ անշարժ գույքերը ձեռք բերելու խնդրանքով դիմում հասցեագրել ՀՀ կառավարությանը:

Պետական սեփականության կառավարմամբ օժտված ՀՀ կառավարության անդամները, պետական գույքի կառավարման լիազոր մարմնի եզրակացության[1] բացակայության պայմաններում, 2012 թվականի փետրվարի 2-ին կայացրել են թիվ 112-Ա որոշումը, որով ՀՀ պաշտպանության նախարարությանը թույլատրվել է 8,424,500,000 (ութ միլիարդ չորս հարյուր քսանչորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով, տարաժամկետ վճարման պայմանով, «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությանն օտարել Անշարժ գույքերը:

Ընդ որում, հանցավոր խմբի անդամները, նպատակ ունենալով քողարկել պետության սեփականությունը հանդիսացող և առանձնապես խոշոր չափերի հասնող գույքի հափշտակության իրենց հանցավոր մտադրությունն ու հեռահար նպատակները, նույն որոշմամբ ձևականորեն ամրագրել են, որ գնորդը պարտավորվում է առուվաճառքի պայմանագիրը կնքելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, վաճառողի հետ համաձայնեցնել ներդրումային ծրագիր՝ վեց ամսվա ընթացքում ապահովելով 300 աշխատատեղ և 10.000.000 ԱՄՆ դոլարի չափով ներդրումներ:

Հիշյալ որոշմամբ նաև սահմանվել է, որ անշարժ գույքի ամբողջ գինը գնորդի կողմից ենթակա է վճարման ոչ ուշ, քան մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը, որից՝ առաջին վճարումը՝ 1.310.000.000 ՀՀ դրամի չափով՝ առուվաճառքի պայմանագիրը կնքելու պահից 10 օրվա ընթացքում, երկրորդ վճարումը՝ 2.000.000.000 ՀՀ դրամի չափով՝ մինչև 2012 թվականի նոյեմբերի 1-ը, 2013 թվականից՝ յուրաքանչյուր տարի 1.000.000.000 ՀՀ դրամի չափով, իսկ վերջին տարում՝ գումարի մնացած մասը:

---

[1] «Պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված գույքի օտարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 1994 թվականի փետրվարի 25-ի թիվ 92 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության՝ 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 882-Ն որոշման համաձայն՝ (....) 4. հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված գույքի օտարման մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ վարչություն) եզրակացությամբ: (....) 5. Սույն կարգի 4-րդ կետում նշված որոշումը պետք է ներառի տեղեկություններ՝ ա) հիմնական միջոցի գնահատման տարեթվի և ամսաթվի մասին, բ) օտարման ձևի, այդ թվում՝ որպես գույքի մեկ միավոր կամ որպես գույքի առանձին տարրեր օտարելու մասին, (....) 9. Կազմակերպության սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի 25 մլն դրամից ավելի գնահատված արժեք (արժեքների գումար) ունեցող հիմնական միջոցի (միջոցների) օտարման մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի ներկայացմամբ և վարչության եզրակացությամբ:

Այնուհետև՝ 2012 թվականի ապրիլի 19-ին, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի և փաստացի Վահե Յաքուբյանին պատկանող «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերության տնօրեն Հովհաննես Աբրահամյանի միջև ձևականորեն կնքվել է շինարարական աշխատանքների մեկնարկի և ավարտի ժամանակահատվածի, վճարման կարգի և դրա ժամանակահատվածի վերաբերյալ դրույթներ չպարունակող՝ պետական գնման մասին թիվ 1 պայմանագիրը, ըստ որի՝ «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերությունը պարտավորվել է ՀՀ պաշտպանության նախարարությամբ ֆինանսավորմամբ Երևան, Գյումրի և Գորիս քաղաքներում կառուցել ընդհանուր 3,809,216,000 (երեք միլիարդ ութ հարյուր ինը միլիոն երկու հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ արժողության բազմաբնակարան շենքեր, սակայն որևէ շենք չի կառուցվել:

Հաջորդիվ՝ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից լիազորված Պավել Շադյանի և Ընկերության կողմից լիազորված Դերենիկ Խաչիկի Գյոզալյալի միջև ՀՀ կառավարության որոշմամբ նշված պայմաններով և վճարման ժամանակացույցով 2012 թվականի ապրիլի 23-ին կնքվել է Անշարժ գույքերի առուվաճառքի նախնական պայմանագիր, որի 2.10-րդ կետի համաձայն[2]՝ գնորդն իրավունք չի ունեցել գույքն օտարել մինչև անշարժ գույքերի արժեքի՝ 8.424.500.000 (ութ միլիարդ չորս հարյուր քսանչորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի վճարումը:

Դրանից հետո՝ 2012 թվականի օգոստոսի 3-ին, ի կատարումն ՀՀ կառավարության որոշման և նախնական պայմանագրում ամրագրված դրույթների, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից լիազորված Պավել Շադյանի և Ընկերության տնօրեն Աշոտ Արշակի Գոմցյանի միջև կնքվել է Անշարժ գույքերի առուվաճառքի հիմնական պայմանագիրը:

Ընդ որում, պայմանագրի 1.13-րդ կետով, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գիտությամբ, ի հակառակ «Ջեներալ Տրանսուոլդ Մենյուֆեքչրինգ Քամփնի» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարչի և ՀՀ պաշտպանության նախարարի կողմից լիազորված անձի միջև 2011 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված առուվաճառքի հիշյալ պայմանագրերով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ստանձնած պարտավորության, դիտավորությամբ ամրագրվել են պետության համար ոչ շահեկան, իսկ հանցավոր խմբի անդամների համար՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների տիրույթում ակնհայտ առավելություններ ընձեռող դրույթներ, որոնցով պայմաններ է ստեղծվել հետագայում պետությանը զրկելու պայմանագրային պարտավորությունները խախտելու դեպքում դրանց վերականգնման ուղղությամբ արդյունավետ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածի 6-րդ մասի նորմին[3] հակառակ՝ առուվաճառքի հիմնական պայմանագրի 1.13-րդ կետում

---

[2] 2.10. Գնորդն իրավունք չունի սույն պայմանագրի 2.1. կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված գույքն օտարել, բացառությամբ գույքը վարձակալության և անհատույց օգտագործման հանձնելու, մինչև պայմանագրի 2.2. կետով սահմանված գումարի ամբողջական վճարումը: Սույն կետով սահմանված գույքը կարող է գրավ դրվել միայն վաճառողի թույլտվությամբ:

[3] ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ապառիկ վաճառված ապրանքը գնորդին հանձնելու պահից մինչև դրա համար վճարելը համարվում է վաճառողի մոտ գրավ դրված՝ ի ապահովումն ապրանքի համար վճարելու գնորդի պարտավորության կատարման, եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով:

նախատեսվել է դրույթ, համաձայն որի՝ Անշարժ գույքի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքի գրանցման պահից ի վեր վաճառողը դրա նկատմամբ գրավի իրավունք չունի:

Միաժամանակ, նույն պայմանագրով պետության համար անհարկի պարտավորություն է նախատեսվել ցանկացած պարագայում համաձայնություն տալ, որպեսզի վաճառվող Անշարժ գույքերը լրիվ կամ մասնակի գրավադրվեն երրորդ անձանց մոտ՝ չորոշակիացված պայմանով, եթե գրավադրմամբ ներգրավվող միջոցները նախատեսվելու են Անշարժ գույքերում ներդրումներ և (կամ) վաճառողին պայմանագրի գնի վճարումներ կատարելու համար:

Այսինքն, գործարար շրջանառության սովորույթներին և սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան պայմանագրերի կնքման համար ընդունելի դրույթներին տրամագծորեն հակասող ձևակերպումներով, հանցավոր մեխանիզմում ընդգրկված անձինք ստեղծել են պայմաններ՝ գույքի հափշտակությանն ուղղված իրենց հանցավոր մտադրությունն անխոչընդոտ իրագործելու համար:

Այնուհետև՝ պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման պայմաններում, Վահե Յաքուբյանը, օգտվելով պայմանագրով սահմանված՝ ներդրումային ծրագիր իրականացնելու կամ ՀՀ պաշտպանության նախարարության հանդեպ ունեցած պարտավորությունները կատարելու նպատակով ձեռքբերված գույքը գրավ դնելու հնարավորությունից, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին հասցեագրված դիմումով խնդրել է տալ համաձայնություն՝ Անշարժ գույքերից երկուսը՝ նախ Երևան քաղաքի Էրեբունի, Արին-Բերդի 3-րդ նրբանցքի 2/1, այնուհետև՝ Երևան քաղաքի Շենգավիթ, Բագրատունյաց 81 հասցեների անշարժ գույքերը «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերության կողմից 4.200.000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլարի չափով վարկ ստանալու նպատակով «Կոնվերս բանկ» ՓԲ ընկերությունում (այսուհետ՝ Բանկ) գրավադնելու վերաբերյալ:

Նույն դիմումով պետական մարմնին ներկայացվել են իրական նպատակին չհամապատասխանող տեղեկություններ այն մասին, որ իբր ստացվելիք վարկային միջոցներն ուղղվելու են պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարմանը՝ անշարժ գույքում ներդրումներ կամ վաճառողին վճարումներ կատարելուն:

Սեյրան Օհանյանը, Ընկերության կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունները բարեխղճորեն չկատարելու պայմաններում, 2012 թվականի սեպտեմբեր 5-ին և 20-ին տվել է իր համաձայնությունը՝ լիազորված անձանց համաձայնագրերով հիշյալ անշարժ գույքերը «Կոնվերս բանկ» ՓԲ ընկերությունում գրավադրելու և այդ կերպ «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերությանը Բանկի կողմից արդեն իսկ մասնակի տրամադրված ընդհանուր 1.725.753.000 (մեկ միլիարդ յոթ հարյուր քսանհինգ միլիոն յոթ հարյուր հիսուներեք հազար) ՀՀ դրամին համարժեք՝ 4.200.000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլար վարկը երաշխավորված գրավով ապահովելու համար:

Վերոգրյալից հետո, հիշյալ անշարժ գույքերը գրավադրվել են «Կոնվերս բանկ» ՓԲ ընկերությունում, և միայն դրանից հետո՝ վարկային պայմանագրերով և

համաձայնագրերով ստացած ընդհանուր 1.786.890.000 (մեկ միլիարդ յոթ հարյուր ութսունվեց միլիոն ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամից Վահե Յաքուբյանի ցուցումով 2012 թվականի սեպտեմբերի 7-ին «Գլենդել Հիլզ» ընկերության տնօրեն Էդուարդ Համլետի Մելիքյանի կողմից Ընկերության միջոցով ՀՀ պաշտպանության նախարարությանը փոխանցվել է 403.000.000 (չորս հարյուր երեք միլիոն) ՀՀ դրամ:

Վերոգրյալից ավելի քան 1 տարի անց՝ 2013 թվականի դեկտեմբերի 10-ին՝ փոխանցվել է ևս 300.000.000 (երեք հարյուր երեք միլիոն) ՀՀ դրամ:

Վարկային պայմանագերով և համաձայնագրերով ստացած ընդհանուր 1.786.890.000 ՀՀ դրամից մնացած՝ 1.083.890.000 (մեկ միլիարդ ութսուներեք միլիոն ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամը վերջնարդյունքում ներառվել է Վահե Յաքուբյանի գույքային ֆոնդում:

Այնուհետև, հանցակիցների կողմից նախապես մշակված հանցավոր սխեմայի կիրառմամբ, հանցավոր ճանապարհով՝ խարդախությամբ ստացված առանձնապես խոշոր չափերով գույքի գրավադրմամբ ստացված 1.083.890.000 ՀՀ դրամ գույքի հանցավոր ծագումը, դրա նկատմամբ պետության իրավունքները թաքցնելու և դրա պատկանելիությունը խեղաթյուրելու նպատակով, Վահե Յաքուբյանի ցուցումով՝ կրկին «Գլենդել Հիլզ» ընկերության տնօրեն Էդուարդ Համլետի Մելիքյանի կողմից «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերության բանկային հաշվեհամարներում առկա՝ հանցավոր ծագում ունեցող դրամական միջոցների մեծ մասը նույն ժամանակահատվածում փոխանցվել են իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց անվամբ բացված հաշվեհամարներին, իսկ մնացած մասը կանխիկացվել է նրա հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց կողմից՝ այդ կերպ դրվելով շրջանառության մեջ՝ օրինականացվել են և տնօրինվել:

Չնայած վերոգրյալին, «Նայթս Բրիջ Քոմունիքեյշն Էյ Էմ» ՓԲ ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու պայմաններում, Սեյրան Օհանյանը չկատարելով իր ծառայողական պարտականությունները՝ որևէ միջոց չի ձեռնարկել պայմանագրից բխող պատասխանատվության միջոցներ կիրառելու կամ դատական պաշտպանության դիմելու ուղղությամբ, ավելին՝ խմբային շահերից ելնելով պաշտոնեական դիրքն օգտագործելով ծառայության շահերին հակառակ 2013-2014 թվականների ընթացքում իր ենթակայությամբ գտնվող աշխատակիցներին հանձնարարել է ձեռնպահ մնալ պատասխանատվության միջոցներ կիրառելու կամ դատական պաշտպանության դիմելու իրավունքի իրացման հնարավորության օգտագործումից:

Մասնավորապես.

Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելուց բխող գործողություններ կատարելու, այն է՝ պարտավորությունների կատարման երաշխիքները և պատասխանատվության շրջանակները սահմանելու, անհրաժեշտության դեպքում ՀՀ կառավարության նոր որոշման նախագիծ կազմելու և ՀՀ կառավարության՝ 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 112-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ միջոցներ ձեռնարկելու համար ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր

ֆինանսիստ, ֆինանսաբյուջետային վարչության և պլանավորման վարչության պետ Վաղարշակ Նորիկի Ավետիսյանի կողմից ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին 2013 թվականի փետրվարի 4-ին ներկայացվել է տեղեկանք և զեկուցվել վերոգրյալը:

Բացի այդ, Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների չկատարման մասով դատական պաշտպանության դիմելու համար 2014 թվականի ապրիլի 22-ին ՀՀ պաշտպանության նախարարության կոմունալ շահագործման և զորքերի բնակավորման վարչության պետ Աշոտ Բենիկի Գրիգորյանը ևս գրություն է հասցեագրել ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին և զեկուցել դրանում նշված՝ խնդրո առարկայի ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին, սակայն Սեյրան Օհանյանն այդ ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկել՝ չի հանձնարարել դիմել դատական պաշտպանության և այդ կերպ իրականացնել միջոցառումներ Անշարժ գույքերն Ընկերությունից պետությանը վերադարձնելու կամ դրանց ձեռք բերման դիմաց Ընկերության կողմից վճարելու ուղղությամբ, այլ փոխարենը, շուրջ վեց ամիս անց՝ 2014 թվականի հոկտեմբերի 7-ին, նոր միայն գրության վրա մակագրել է «Կքննարկենք ՀՀ նախագահի հետ, հետո կորոշենք»:

Հանցակիցների՝ միմյանց փոխլրացնող վերը հիշատակված գործողությունների արդյունքում և նախապես ծրագրված գործողությունների հաջորդականությամբ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ներկայացուցիչը, 2014 թվականի հոկտեմբերի 7-ի[4] դրությամբ ունեցած 3,061,263 (երեք միլիոն վաթսունմեկ հազար երկու հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ պարտավորությունը չկատարելու համար Ընկերության սնանկ ճանաչելու պահանջով 2014 թվականի նոյեմբերի 6-ին դիմում է մուտքագրել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 18-ի վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ, իսկ 2015 թվականի ապրիլի 29-ին որոշմամբ հաստատված պարտատերերի վերջնական ցուցակում ՀՀ պաշտպանությունը 8,581,279,286 (ութ միլիարդ հինգ հարյուր ութսունմեկ միլիոն երկու հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր ութսունվեց) ՀՀ դրամով գրանցվել է պարտատերերի չորրորդ տեղում՝ որպես գրավով չապահովված պարտատեր՝ այդ կերպ զրկվելով «Նայթս Բրիջ Քոմունիքեյշն Էյ Էմ» ՓԲ ընկերությանն օտարված պետական գույքերի դիմաց վճարում ստանալու կամ օտարված գույքերն օրենքի ուժով վերադարձնելու հնարավորությունից:

Այսինքն, Սեյրան Օհանյանը, խմբային շահերից ելնելով, պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, ինչպես նաև չի կատարել իր ծառայողական պարտականությունները, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, այն է, նախ «Նայթս Բրիջ Քոմունիքեյշն Էյ Էմ» ՓԲ ընկերության հետ կնքվել է պետության համար ոչ շահեկան, իսկ հանցավոր խմբի անդամների համար՝

[4] Ուշագրավ է՝ նույն այն օրը, երբ Սեյրան Օհանյանը կատարել է վերոհիշյալ բովանդակության մակագրությունը:

քաղաքացիաիրավական հարաբերությունների տիրույթում ակնհայտ առավելություններ ընձեռող դրույթներ պարունակող պայմանագիր, դրա արդյունքում պետությունը զրկվել է պայմանագրային պարտավորությունները խախտելու դեպքում դրանց վերականգնման ուղղությամբ արդյունավետ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից, հանցավոր խմբի համար նպաստավոր պայմաններ են ստեղծվել պայմանագրային պարտավորությունները չկատարելու պայմաններում գրավադրել պայմանագրի առարկա հանդիսացող գույքերը և հափշտակել գրավադրման արդյունքում ստացված գումարի զգալի մասը՝ 1.083.890.000 ՀՀ դրամը, իսկ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 18-ի վճռով զրկվելով «Նայթս Բրիջ Քոմունիքեյշն Էյ Էմ» ՓԲ ընկերությանը սնանկ ճանաչվելուց հետո՝ 2015 թվականի ապրիլի 29-ին, որոշմամբ հաստատված պարտատերերի վերջնական ցուցակում ՀՀ պաշտպանության նախարարությունը որպես գրավով չապահովված պարտատեր 8,581,279,286 ՀՀ դրամով գրանցվել է պարտատերերի ընդամենը չորրորդ տեղում՝ այդ կերպ զրկվելով «Նայթս Բրիջ Քոմունիքեյշն Էյ Էմ» ՓԲ ընկերությանն օտարված պետական գույքերի դիմաց վճարում ստանալու կամ օտարված գույքերն օրենքի ուժով վերադարձնելու հնարավորությունից:

Բացի վերոգրյալը, բանկում գրավադրված՝ Երևան քաղաքի Շենգավիթ, Բագրատունյաց 81 հասցեի անշարժ գույքի օտարման վերջին խոչընդոտը չեզոքացնելու, պետության գույքային ֆոնդից վերջնականապես դուրս բերելու և Վահե Յաքուբյանի սեփականությանը հանձնելու նպատակով Սեյրան Օհանյանը 2015 թվականի դեկտեմբերի 11-ին լիազորված անձի՝ Պավել Շադյանի միջոցով տվել է իր համաձայնությունը՝ նշված անշարժ գույքը փաստացի Վահե Յաքուբյանին պատկանող, 2015 թվականի հունիսի 26-ին Էդուարդ Մելիքյանի կողմից հիմնադրված «Պրոջեքթ Ի» ՍՊ ընկերությանը 2,174,598,064 (երկու միլիարդ հարյուր յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր իննսունութ հազար վաթսունչորս) ՀՀ դրամին համարժեք՝ 4.506.472 ԱՄՆ դոլար գումարի դիմաց ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ,

Վերոգրյալ համաձայնության հիման վրա նույն թվականի դեկտեմբերի 25-ին Ընկերության սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանի և «Պրոջեքթ Ի» ՍՊ ընկերության տնօրեն Սասուն Սիմոնի Մուրադյանի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Երևան քաղաքի Շենգավիթ, Բագրատունյաց 81 հասցեի անշարժ գույքը վերջնականապես դուրս է բերվել ինչպես ՀՀ պաշտպանության նախարարության, այնպես էլ «Նայթս Բրիջ Քոմունիքեյշն Էյ Էմ» ՓԲ ընկերության գույքային ֆոնդերից, և վերջնականապես դարձել է Վահե Յաքուբյանինը, իսկ Երևան քաղաքի Շենգավիթ, Բագրատունյաց 81/1 և Երևան քաղաքի Էրեբունի, Արին-Բերդի 3-րդ նրբանցքի 2/1 հասցեների անշարժ գույքերը հետագայում սնանկության վարույթի շրջանակներում կայացած աճուրդի միջոցով օտարվել են այլ անձանց:

Այդ ամենի արդյունքում Վահե Յաքուբյանը և հանցավոր խմբի մյուս անդամները, պետության՝ 5.884.300.000 (հինգ միլիարդ ութ հարյուր ութսունչորս միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ արժողությամբ Անշարժ գույքերի դիմաց վճարել են 5.181.300.000 (հինգ միլիարդ հարյուր ութսունմեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամով պակաս

գումար, այսինքն՝ շուկայական արժեքի ընդամենը շուրջ 12 %-ը, և խաբեության եղանակով հափշտակել դրանք:

Այսինքն, Սեյրան Օհանյանն պաշտպանության նախարարության հաշվեկշռում հաշվառված և ի պաշտոն իրեն վստահված առանձնապես խոշոր չափերի Անշարժ գույքերն ապօրինի, անհատույց և շահադիտական նպատակով դարձրել է այլ անձինը՝ այդ կերպ վատման եղանակով հափշտակելով այն:

Այսպիսով Սեյրան Մուշեղի Օհանյանին մեղսագրվում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին) և 308-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին), հանցավոր արարքների կատարում:

ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի կողմից վերոնշյալ հանցավոր արարքների կատարումը հաստատվել է քրեական վարույթի նախաքննությամբ ձեռք բերված մի շարք փաստական տվյալներով:

Մասնավորապես.

1) ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունից 2022 թվականի մայիսի 3-ին առգրավված՝ թիվ 62206707 քրեական վարույթի զննությամբ արձանագրված և սույն վարույթի նյութերին կցված փաստաթղթերով, ինչպես նաև Էդուարդ Համլետի Մելիքյանի կողմից ներկայացված՝ Լոնդոնի արբիտրաժային դատարանի կողմից կայացված որոշումներով, համաձայն որոնց՝

1.1 ՀՀ կառավարության 2001 թվականի փետրվարի 24-ի թիվ 136 և նույն թվականի հուլիսի 31-ի թիվ 689 որոշումներով «Դողագործ» ԲԲ ընկերության բազայի վրա հիմնադրվել է «Դողագործ-1» ԲԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), և վերջինին է փոխանցվել 750,000,000 ՀՀ դրամ արժողության՝ 75% հիմնական և շրջանառու միջոցները: ՀՀ առևտրի և արդյունաբերության նախարարությանը հանձնարարվել է տեղաբաշխել «Դողագործ-1» ԲԲԸ բաժնետոմսերը և ամերիկյան «Թի Էս Ինվեսթմենթ Քոռփ» ընկերության հետ կնքել բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագիր: 2001 թվականի դեկտեմբերին կնքված հիշյալ պայմանագրի համաձայն՝ բաժնետոմսերի նշված արժեքը վճարելու դեպքում ամերիկյան ընկերությանը պետք է փոխանցվեր 75% միջոցները: Ընկերությունը պարտավորվել է մեկուկես տարվա ընթացքում վճարել գործարանի աշխատակիցների՝ նախկին տարիներից կուտակված ընդհանուր 169,000,000 ՀՀ դրամի չափով աշխատավարձերը: Դրանից հետո՝ 2002 թվականի հունիսի 14-ին, ամերիկյան ընկերության լիազոր ներկայացուցիչ Արմեն Հարությունյանն ընկերության տնօրեն Ֆիլիպ Ղազարյանին է հանձնել «Վուելս Ֆարգո» ամերիկյան բանկում 750,000,000 ՀՀ դրամին համարժեք՝ 1.287.000 ԱՄՆ դոլար փոխանցում կատարելու վերաբերյալ անդորրագիրը, որը նույն թվականի նոյեմբերի 21-ին Ֆիլիպ Ղազարյանը տվել է Ընկերության սեփականատեր Սարկիս Խրիմյանին,

սակայն վերջինս այն ԱՄՆ տանելու, անդորրագրում նշված՝ 1,287,000 ԱՄՆ դոլարը բանկից ստանալու և այն «Վաշինգտոն Մուչուալ» բանկում առկա՝ Ընկերության հաշվին մուտքագրելու փոխարեն, 2003 թվականի սեպտեմբերի 11-ին Մոսկվայից ձեռք է բերվել 37,600 ԱՄՆ դոլարի չափով ապրանքներ՝ ձևակերպելով փաստաթղթեր, թե իբրև դրանք ձեռք են բերվել ԱՄՆ-ից՝ շուրջ 1,500,000 ԱՄՆ դոլարով,

1.2 2002 թվականի հոկտեմբերի 1-ին Ընկերությունը վերակազմակերպվել է «Ջեներալ Տրանսուոլդ ՄՔ» ՓԲ ընկերության,

1.3 2001 թվականի դեկտեմբերին կնքված պայմանագրով և դրա հիման վրա 2002 թվականի մարտի 13-ի համաձայնագրով ստանձնած պարտավորությունները ՀՀ կառավարության կողմից չկատարելու պատճառաբանությամբ, իրավական ներգործության միջոցներ ձեռնարկելու նպատակով 2007 թվականի հունվարի 3-ին Սարկիս Խրիմյանը միջնորդություն է ներկայացրել Լոնդոնի արբիտրաժային դատարան (այսուհետ՝ Դատարան): Արբիտրաժային դատավարությունում Հայաստանի Հանրապետությունը ներկայացվել է Վահե-Վասկեն Յաքուբյանի և վերջինի միջնորդությամբ՝ ամերիկյան «Մանաթ, Ֆելփս ընդ Ֆիլիփս» փաստաբանական գրասենյակի փաստաբանների կողմից: Դատարանի կանոնների 28.1-ին հոդվածի պահանջով՝ որպես անհրաժեշտ ծախսեր, պատասխանողը (Հայաստանի Հանրապետության կառավարություն), որպես կանխավճար, վճարել է 125,524.11 £ (ֆունտ ստերլինգ),

1.4 1.1 ենթակետում նշված՝ Սարկիս Խրիմյանի կողմից առերևույթ հանցավոր արարք կատարելու կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունում 2007 թվականի սեպտեմբերի 27-ին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 62206707 քրեական գործը, որի քննության արդյունքներով քննիչի 2007 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքներ կատարելու համար Սարկիս Խրիմյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և կալանք է դրվել վերջինիս պատկանած «Ջեներալ Տրանսուոլդ ՄՔ» ՓԲ ընկերության հիմնական և շրջանառու միջոցների վրա,

1.5 Դատարանի թիվ 7870 արբիտրաժային գործով 2009 թվականի հոկտեմբերի 30-ի մասնակի որոշմամբ հայցվորի բոլոր հայցերը, այդ թվում՝ պատասխանողի կողմից 2001 թվականի պայմանագրի 5.2.1, 5.2.3, 5.3.2, 5.3.3, 7.2, 7.3.5 (փոփոխված է 2002 թվականի լրացուցիչ համաձայնագրով), ինչպես նաև երկկողմանի ներդրումային պայմանագրի II (2) (a) և (b), II (2) (b) և (c), II (2) (c) և (d), III հոդվածները չկատարելու վերաբերյալ, ամբողջությամբ մերժվել են՝ բացառությամբ այն հայցի, որը կապված է եղել Սարկիս Խրիմյանի դեմ հարուցված քրեական վարույթով «Ջեներալ Տրանսուոլդ ՄՔ» ՓԲ ընկերության գույքի վրա դրված կալանքին, ինչին Դատարանն անդրադարձել է եզրափակիչ որոշմամբ,

1.6 Դատարանի 2011 թվականի օգոստոսի 18-ի եզրափակիչ որոշման համաձայն՝ հայցվորի հայցը՝ Սարկիս Խրիմյանի դեմ հարուցված քրեական վարույթով «Ջեներալ Տրանսուոլդ ՄՔ» ՓԲ ընկերության գույքի վրա կալանք դնելու մասով, մերժվել

է: Նույն որոշմամբ կողմերը պետք է հավասար վճարեն արբիտրաժային դատավարության՝ 234,374,.85 £ (ֆունտ ստերլինգ)-ի չափով ծախսերը: Մերժվել են նաև յուրաքանչյուր կողմի ներկայացրած՝ մնացած բոլոր պահանջները,

1.7 ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 645-Ա որոշմամբ Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում հարուցված հայցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանող իրավական խորհրդատու «Մանաթ, Ֆելփս և Ֆիլիպս» ընկերությանը 50.000 ԱՄՆ դոլար կանխավճար վճարելու, ինչպես նաև Լոնդոնի միջազգային արբիտարաժային դատարանում գործի հարուցման համար անհրաժեշտ վճարումները Լոնդոնի միջազգային դատարանի կողմից ներկայացվող վճարային փաստաթղթերին համապատասխան վճարելու վերաբերյալ, համաձայն որի՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարներին հանձնարարվել է նախատեսված վճարները կատարել ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին,

1.8 ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի կողմից ստորագրված, ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 2-ի թիվ 870-Ա որոշմամբ Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում հարուցած հայցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանող իրավական խորհրդատու «Մանաթ, Ֆելփս և Ֆիլիպս» ընկերությանը վճարվել է 50.000 ԱՄՆ դոլար կանխավճար և 12500 ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ,

1.9 Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի մարտի 3-ի վճռով «Ջեներալ Տրանսուոլդ ՄՔ» ՓԲ ընկերությունը ճանաչվել է սնանկ:

2) ՀՀ ֆինանսների նախարարության 2022 թվականի մայիսի 27-ի № 1/17/9810-2022 թվակիր գրությամբ և դրան կից փաստաթղթերով, համաձայն որոնց՝

2.1 ՀՀ կառավարության 31.05.2007 թվականի N 645-Ա և 02.08.2007 թվականի N 870-Ա որոշումների շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Մանաթ, Ֆելփս և Ֆիլիպս» ընկերությանը վճարում չի իրականացվել,

Միաժամանակ, կից ներկայացվել են նշված որոշումների համաձայն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությանը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին համապատասխան գումարների հատկացման (ֆինանսավորման) վերաբերյալ մեմորիալ օրդերները,

2.1.1 Երևանի թիվ 1 տեղ. գանձ. բաժանմունքի կողմից 2007 թվականի օգոստոսի 9-ին տրված N 070809-980-00911 մեմորիալ օրդերի համաձայն՝ ՀՀ կառավարության 31.05.07թ. 645-Ա, 02.08.07թ. 870-Ա որոշումներով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից վճարվել է 8650000 (ութ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

2.1.2 Երևանի թիվ 1 տեղ. գանձ. բաժանմունքի կողմից 2007 թվականի օգոստոսի 10-ին տրված N 070810-006-17937 մեմորիալ օրդերի համաձայն՝ ՀՀ կառավարության 31.05.07թ. 645-Ա, 02.08.07թ. 870-Ա որոշումների հիման վրա ՀՀ առևտրի և

տնտեսական զարգացման նախարարության ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից վճարվել է 8626250 (ութ միլիոն վեց հարյուր քսանվեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ «Վճարման նպատակը՝ 12500 ֆունտ ստեռլինգ, 690,10» նշումով,

2.1.3 Երևանի թիվ 1 տեղ. գանձ. բաժանմունքի կողմից 2007 թվականի օգոստոսի 20-ին տրված N 070820-980-01556 մեմորիալ օրդերի համաձայն՝ ՀՀ կառավարության 31.05.07թ. 645-Ա, 02.08.07թ. 870-Ա որոշումների հիման վրա ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից վճարվել է 17100000 (տասնյոթ միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ «Վճարման նպատակը՝ ՀՀ Կառավարության 31.05.07թ. N645-Ա Ց 870-Ա» նշումով,

2.1.4 Երևանի թիվ 1 տեղ. գանձ. բաժանմունքի կողմից 2007 թվականի օգոստոսի 20-ին տրված N 070820-006-22615 մեմորիալ օրդերի համաձայն՝ ՀՀ կառավարության 31.05.07թ. 645-Ա, 02.08.07թ. 870-Ա որոշումների համաձայն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից վճարվել է 17015000 (տասնյոթ միլիոն տասնհինգ հազար) ՀՀ դրամ՝ «Վճարման նպատակը՝ 50.000 ԱՄՆ դոլար 340.3-17015000» նշումով:

Այսպիսով՝ ՀՀ կառավարության՝ 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 645-Ա, և 2007 թվականի օգոստոսի 2-ի թիվ 870-Ա որոշումների հիման վրա փոխանցվել է ընդհանուր 51,391,250 (հիսունմեկ միլիոն երեք հարյուր իննսունմեկ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

3) ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից 2022 թվականի հունիսի 13-ին ստացված՝ նույն թվականի հունիսի 10-ի № ԾՕՀ 1 գրությանը կից տրամադրված փաստաթղթերով, համաձայն որոնց՝ 2007 թվականի հունիսի 8-ին ՀՀ վարչապետ Ս.Սարգսյանի կողմից ստորագրված, «Լիազորություններ վերապահելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 496-Ա որոշմամբ որոշվել է.

3.1 «Դողագործ 1» բաց բաժնետիրական ընկերության բաժնետեր «Թի Էս Ինվեսթմենթ Քոռփ» ընկերության կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետությանը Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում հարուցված հայցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանության լիազորությունը վերապահել Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարությանը,

3.2 Իրավունք վերապահել Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարին «Դողագործ 1» բաց բաժնետիրական ընկերության բաժնետեր «Թի Էս Ինվեսթմենթ Քոռփ» ընկերության կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետությանը Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում հարուցված հայցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանության ապահովման նպատակով կնքել պայմանագիր իրավական խորհրդատու «Մանաթ, Ֆելփս և Ֆիլլիպս» ընկերության հետ,

3.3 Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում հարուցված հայցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանող իրավական

խորհրդատու «Մանաթ, Ֆելփս և Ֆիլլիպս» ընկերության հետ կնքվելիք պայմանագիրը համարել որպես մեկ անձից կատարած գնում,

3.4 Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում հարուցված հայցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանող իրավական խորհրդատու «Մանաթ, Ֆելփս և Ֆիլլիպս» ընկերությանը վճարել կանխավճար 50.000 ԱՄՆ դոլար, ինչպես նաև վճարել Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում գործի հարուցման համար անհրաժեշտ վճարները՝ Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանի կողմից ներկայացված վճարային փաստաթղթերին համապատասխան,

3.5 Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարներին՝ սույն որոշմամբ նախատեսված վճարները կատարել Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին:

4) ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 496-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 2-ի N 870-Ա որոշմամբ (այն նույն օրն ստորագրվել է ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի կողմից), որով որոշվել է հիշյալ որոշման 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարությանը Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծառայությունների ձեռքբերման ծախսեր» հոդվածով) 2007 թվականի երրորդ եռամսյակում հատկացնել՝

ա. 50.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում հարուցված հայցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանող իրավական խորհրդատու «Մանաթ, Ֆելփս և Ֆիլլիպս» ընկերությանը կանխավճար վճարելու համար,

բ. 12500 ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ՝ Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում գործի հարուցման պարտադիր վճար վճարելու համար»:

5) ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը գումար հատկացնելու մասին ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 22-ի N 496-Ա որոշման վերաբերյալ ՀՀ կառավարության նիստի արձանագրության քաղվածքով, որով առաջարկվել է՝

5.1 ընդունել ներկայացված որոշման նախագիծը,

5.2 ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն.Երիցյանին՝ ՀՀ ֆինանսների նախարար Տ.Դավթյանի առաջարկությանը համապատասխան՝ ներկայացնել արբիտրաժային դատարանի վերջին վճարային փաստաթղթերը:

Նշված քաղվածքը ստորագրվել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի կողմից:

6) ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը գումար հատկացնելու մասին ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 22-ի N 496-Ա որոշմամբ, ըստ որի՝ «Ջեներալ

Տրանսուոլդ» ՄՔ ՓԲ ընկերության բաժնետեր արտահերթ պարտատեր նշված է «Թի Էս Ինվեսթմենթ Քոուփ» ընկերության կողմից Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում ընդդեմ Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և իրավաբանական ծառայություններ մատուցող «Մանաթ, Ֆելփս և Ֆիլլիպս» ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն «Մանաթ, Ֆելփս և Ֆիլլիպս» ընկերության փաստացի մատուցած ծառայությունների համար, ինչպես նաև Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանի վճարը վճարելու նպատակով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը 2008 թվականի երկրորդ եռամսյակում հատկացնել 190136.77 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ և 83474.95 ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հավելվածով):

Նշված որոշումը 2008 թվականի մայիսի 29-ին ստորագրվել է ՀՀ վարչապետ Տ.Սարգսյանի կողմից:

7) «Ջեներալ Տրանսուոլդ Մենյուֆեքչրինգ Քամփնի» ՓԲ ընկերության՝ ի դեմս սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանի՝ որպես վաճառող, և ՀՀ պաշտպանության նախարարության՝ ի դեմս պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից լիազորված անձ Պավել Շադյանի՝ որպես գնորդ, միջև 16.12.2011 թվականին կնքված՝ «Անշարժ գույքի տարաժամկետ առուվաճառքի» թվով երեք պայմանագրերով, համաձայն որոնց՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը ընդհանուր 1.310.000.000 (մեկ միլիարդ երեք հարյուր տասը միլիոն) ՀՀ դրամով գնել է Երևան քաղաքի Բագրատունյաց 81 (արժեքը՝ 1.108.000.000 ՀՀ դրամ), 81/1 (արժեքը՝ 16.000.000 ՀՀ դրամ) և Արին-Բերդի 3-րդ նրբանցքի 2/1 (արժեքը՝ 186.000.000 ՀՀ դրամ) հասցեների անշարժ գույքերը: Առուվաճառքի պայմանագրերով գնորդը, ի թիվս այլնի, որպես պայմանագրային պարտավորություն ընդունել է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածով ամրագրված պահանջը:

8) ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 112-Ա որոշմամբ և դրա կայացման համար հիմք հանդիսացած փաստաթղթերով, համաձայն որոնց՝

- ՀՀ կառավարության՝ 2012 թվականի թիվ 112-Ա որոշումը կայացվել է ՀՀ կառավարության մեկ այլ՝ 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 882-Ն որոշման պահանջների խախտմամբ[5]՝ առանց Հայաստանի Հանրապետության

[5] Պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված գույքի օտարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 1994 թվականի փետրվարի 25-ի թիվ 92 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության՝ 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 882-Ն որոշման համաձայն՝ (....) 4. հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված գույքի օտարման մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ վարչություն) եզրակացությամբ: (....) 5. Սույն կարգի 4-րդ կետում նշված որոշումը պետք է ներառի տեղեկություններ՝ ա) հիմնական միջոցի գնահատման տարեթվի և ամսաթվի մասին, բ) օտարման ձևի, այդ թվում՝ որպես գույքի մեկ միավոր կամ որպես գույքի առանձին տարրեր օտարելու մասին, (....) 9. Կազմակերպության սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի 25 մլն դրամից ավելի գնահատված արժեք (արժեքների գումար) ունեցող հիմնական միջոցի (միջոցների) օտարման մասին որոշումն

կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության եզրակացության:

➢ ՀՀ կառավարության՝ 2012 թվականի թիվ 112-Ա որոշման կայացմանը չի նախորդել ներդրումային ծրագրի առկայությունը: Ինչպես որոշման մեջ, այնպես էլ մինչ այդ ներկայացված փաստաթղթերում, այդ թվում՝ ՀՀ կառավարության որոշման նախագծում, չի բացահայտվել 300 աշխատատեղի և 10.000.000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլարի չափով ներդրումների բնույթի բովանդակությունը:

9) ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից լիազորված Պավել Շադյանի և «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության կողմից լիազորված Դերենիկ Գյոզալյալի միջև 2012 թվականի ապրիլի 23-ին, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից լիազորված Պավել Շադյանի և «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության տնօրեն Աշոտ Գոմցյանի միջև 2012 թվականի օգոստոսի 3-ին կնքված՝ վերը նշված անշարժ գույքերի առուվաճառքի նախնական և հիմնական պայմանագրերով, համաձայն որոնց՝

✓ նախնական և հիմնական պայմանագրերում ևս չեն բացահայտվել 300 աշխատատեղի և 10.000.000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլարի չափով ներդրումների բնույթի բովանդակությունը:

✓ Նախնական պայմանագրի 2.10-րդ կետի համաձայն[6]՝ գնորդն իրավունք չի ունեցել գույքն օտարել մինչև անշարժ գույքերի արժեքի՝ 8.424.500.000 (ութ միլիարդ չորս հարյուր քսանչորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի վճարումը:

10) Հիմնական պայմանագրի 1.13-րդ կետով[7], ի հակառակ «Ջեներալ Տրանսուոլդ Մենյուֆեքչրինգ Քամփնի» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարչի և ՀՀ պաշտպանության նախարարի կողմից լիազորված անձի միջև 2011 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված տարաժամկետ առուվաճառքի հիշյալ պայմանագրերով ՀՀ ՊՆ կողմից ստանձնած պարտավորության, դիտավորությամբ ամրագրվել է պետության համար ոչ շահեկան, իսկ հանցավոր խմբի անդամների համար՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների տիրույթում ակնհայտ առավելություններ ընձեռող դրույթներ, որոնցով պայմաններ է ստեղծվել հետագայում պետությանը զրկելու պայմանագրային պարտավորությունները խախտելու դեպքում դրանց վերականգնման ուղղությամբ արդյունավետ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից:

11) ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից 05.09.2012 թվականին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական

ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի ներկայացմամբ և վարչության եզրակացությամբ:

[6] 2.10. Գնորդն իրավունք չունի սույն պայմանագրի 2.1. կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված գույքն օտարել, բացառությամբ գույքը վարձակալության և անհատույց օգտագործման հանձնելու, մինչև պայմանագրի 2.2. կետով սահմանված գումարի ամբողջական վճարումը: Սույն կետով սահմանված գույքը կարող է գրավ դրվել միայն վաճառողի թույլտվությամբ:

Հատկանշական է, որ, ինչպես վերը նշվել է, նախնական պայմանագրում ամրագրված նշված կետը հիմնական պայմանագրի դրույթներում չի ամրագրվել:

[7] 1.13. Կողմերը համաձայնվում են, որ Անշարժ գույքի նկատմամբ Գնորդի սեփականության իրավունքի գրանցման պահից ի վեր Վաճառողը դրա նկատմամբ գրավի իրավունք չունի, սակայն Անշարժ գույքի տնօրինման հարցում Պայմանագրի 1.10 և 1.11 կետերով նախատեսված սահմանափակումները ենթակա է կիրառելի հաշվառման կամ գրանցման Անշարժ գույքին վերաբերող կադաստրային գործում որպես Պայմանագրի հիմքով Վաճառողի օգտին կիրառված սահմանափակումներ մինչև Պայմանագրի գնի լրիվ վճարման պահը գործողության ժամկետով:

ապահովման դեպարտամենտի պետի խորհրդական Պավել Ասծատուրի Շադյանի անվամբ տրված ՊՆ/510-1356 լիազորագրով և վերջինի կողմից նույն օրը ՀՀ պաշտպանության նախարարության անունից տրված ՊՆ/510-1356 համաձայնագրով, համաձայն որոնց՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» ՓԲ ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման պայմաններում[8] իր համաձայնությունն է տվել «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» ՓԲ ընկերությանը՝ Երևան քաղաքի Արին Բերդի 3 նրբանցք 2/1 հասցեների անշարժ գույքը երրորդ անձ գրավատուի ռեժիմով գրավադնելու «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերությունում:

12) ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին հասցեագրված «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» ՓԲ ընկերության տնօրեն Ա.Գոմցյանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 19-ի 12/06 թվակիր գրությամբ, որով հայտնվել է հետևյալը. «Ինչպես գիտեք մեր ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարությունից գնել է ք.Երևան, Բագրատունյաց 81, Բագրատունյաց 81/1 և Արին Բերդի 3-րդ նրբանցք 2/1 հասցեներով անշարժ գույքերը՝ տարաժամկետ վճարման պայմանով»:

Հիմք ընդունելով 03.08.2012 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի 1.11 կետը՝ «Պայմանագրի ընթացիկ վճարումների կատարման համար, քանի դեռ Պայմանագրի գինը լրիվ վճարված չէ, Գնորդն իրավունք ունի անշարժ գույքը լրիվ կամ մասնակի գրավադրել երրորդ անձանց մոտ բացառապես Վաճառողի գրավոր համաձայնությամբ», խնդրում եմ Ձեզ տրամադրել գրավոր համաձայնություն Ընկերությանը՝ Բագրատունյաց պողոտա 81 հասցեի անշարժ գույքը երրորդ անձ գրավատուի ռեժիմով գրավադնելու «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի մոտ՝ մինչև 4200000 ԱՄՆ դոլար «Թի Թի էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերության վարկավորման համար: Վարկառուն ստացվող վարկի գումարը ծառայությունների դիմաց փոխանցելու է Ընկերությանը և գումարը կօգտագործվի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի գնի ընթացիկ վճարումները կատարելու կամ ներդրումային ծրագրի համար»:

Գրության վրա ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից 2012 թվականի սեպտեմբերի 22-ին կատարվել է «Համաձայն եմ» ձեռագիր նշումը:

<u>Հատկանշական է, որ նշված գրության հիման վրա ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի վարչական ապարատի ընդհանուր բաժնի պետ-վարչական ապարատի ղեկավարի տեղակալ Արտակ Աբրահամյանին լիազորագիր, իսկ վերջինի կողմից «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» ՓԲ ընկերությանը համաձայնագիր տրվել է Սեյրան Օհանյանի գրավոր համաձայնությունը ստանալուց երկու օր առաջ՝ 20.09.2012 թվականին:</u>

[8] 2012 թվականի օգոստոսի 3-ին կնքված հիմնական պայմանագրի համաձայն՝ գնորդը պարտավորվել է պայմանագիրը կնքելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, վճարել 1.310.000.000 (մեկ միլիարդ երեք հարյուր տասը միլիոն) ՀՀ դրամ, սակայն պարտավորությունը չի կատարել: 2012 թվականի սեպտեմբերի 7-ին վճարել է դրանից շուրջ երեք անգամ պակաս՝ ընդամենը 403.000.000 (չորս հարյուր երեք միլիոն) ՀՀ դրամ:

13) Սեյրան Օհանյանի կողմից 20.09.2012 թվականին ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի վարչական ապարատի ընդհանուր բաժնի պետ-վարչական ապարատի ղեկավարի տեղակալ Արտակ Աբրահամյանին տրված լիազորագրով, ըստ որի՝ Երևան քաղաքի Բագրատունյաց 81 հասցեի անշարժ գույքի հետ կապված գործարքներում Արտակ Աբրահամյանին լիազորել է հանդես գալ ՀՀ պաշտպանության նախարարության անունից՝ տրամադրել գրություններ, համաձայնություններ, ներկայացնել առարկություններ կամ առաջարկություններ, ընդունել հաշվետվություններ:

14) ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի վարչական ապարատի ընդհանուր բաժնի պետ-վարչական ապարատի ղեկավարի տեղակալ Արտակ Ալբերտի Աբրահամյանի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության անունից 20.09.2012 թվականին տրված ԴՎԱ/2641 համաձայնագրով, ըստ որի՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների շարունակական ոչ պատշաճ կատարման պայմաններում, տվել է իր համաձայնությունը «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությանը Երևան քաղաքի Բագրատունյաց 81 հասցեի անշարժ գույքը երրորդ անձ գրավատուի ռեժիմով գրավադնելու «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի մոտ՝ 4.200.000 ԱՄՆ դոլար «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերությանը վարկավորելու համար:

15) «Թի Թի Էյ Քոնսալթինգ» և «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերությունների միջև 4.200.000 ԱՄՆ դոլար վարկ տրամադրելու վերաբերյալ 02.07.2012 թվականին կնքված թիվ 347868 պայմանագրով և դրա հիման վրա նույն օրը կնքված թիվ 347868, 18.07.2012 թվականին կնքված թիվ 350106, 06.09.2012 թվականին կնքված թիվ 357116, 24.09.2012 թվականին կնքված թիվ 359471, 28.09.2012 թվականին կնքված թիվ 416902 վարկային լրացուցիչ համաձայնագրերով, ինչպես նաև «Պարտապան չհանդիսացող անձանց անշարժ գույքի գրավի» մասին 06.09.2012 թվականին կնքված թիվ N1C267878 և 24.09.2012 թվականին կնքված թիվ N1C270083 պայմանագրերով, համաձայն որոնց՝ 4.200.000 ԱՄՆ դոլար վարկի դիմաց, ի թիվս այլնի[9], գրավադրվել են նաև ՀՀ պաշտպանության նախարարությանը պատկանած՝ Երևան քաղաքի Արին-Բերդի 3-րդ նրբանցքի 2/1 և Երևան քաղաքի Բագրատունյաց 81 հասցեների անշարժ գույքերը:

---

[9] 02.07.2012 թվականին կնքված՝ «Պարտապան չհանդիսացող անձանց անշարժ գույքի գրավ» մասին N1C259229 պայմանագրի համաձայն՝ վարկավորման համար գրավադրվել է Վահե Յաքուբյանի կողմից հիմնադրված «Հ.Ռ.-Ա.Ա.Ա» ՍՊ ընկերությանը (տնօրեն Արամ Ղևոնդյան) պատկանող 1,040,000,000.00 ՀՀ դրամ (մեկ միլիարդ քառասուն միլիոն) գնահատված՝ Երևան քաղաքի Ք.Զեյթուն, Կ.Ուլնեցու փողոցի 32/7 հասցեում գտնվող 2.5 հա մակերեսով հողամասը:

02.07.2012 թվականին կնքված՝ «Պարտապան չհանդիսացող անձանց անշարժ գույքի գրավի» մասին N1C259230 պայմանագրի համաձայն՝ վարկավորման համար գրավադրվել է «Հ.Ռ.-Ա.Ա.Ա» ՍՊ ընկերությանը (տնօրեն Արամ Ղևոնդյան) պատկանող, 47,700,000 ՀՀ դրամ դրամ (քառասունյոթ միլիոն յոթ հարյուր հազար) գնահատված՝ Երևան քաղաքի Ք.Զեյթուն, Կ.Ուլնեցու փողոցի 32/8 հասցեում գտնվող 0.1 հա մակերեսով հողամասը:

02.07.2012 թվականին կնքված՝ «Պարտապան չհանդիսացող անձանց անշարժ գույքի գրավի>> մասին N1C259311 պայմանագրի համաձայն՝ վարկավորման համար գրավադրվել է «Հ.Ռ.-Ա.Ա.Ա» ՍՊ ընկերությանը (տնօրեն Արամ Ղևոնդյան) պատկանող, 148,000,000 ՀՀ դրամ դրամ (հարյուր քառասունութ միլիոն) գնահատված՝ Երևան քաղաքի Ք.Զեյթուն, Կ.Ուլնեցու փողոցի 32/13 հասցեում գտնվող 0.3 հա մակերեսով հողամասը:

Ի տարբերություն նախորդ պարբերությամբ նշվածի՝ մինչ այդ Երևան քաղաքի Արին-Բերդի 3-րդ նրբանցքի 2/1 հասցեի անշարժ գույքը գրավադնելու թույլտվություն ստանալու համար ՀՀ պաշտպանության նախարարին ենթադրաբար գրություն չի հասցեագրվել[10], հետևաբար գրավոր հավաստում չի տրվել առ այն, որ տվյալ գույքի գրավադրման դիմաց ստացվելիք վարկային միջոցները ծառայեցվելու են անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի գնի ընթացիկ վճարումները կատարելու կամ ներդրումային ծրագրի համար, սակայն, նման պայմաններում, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից Պավել Շադյանին տրված լիազորագրի հիման վրա վերջինի կողմից տրվել է գրավոր համաձայնություն:

Հատկանշական է նաև, որ «Կոնվերս բանկ» ՓԲ ընկերության կողմից 2012 թվականի հուլիսի 2-ին, 18-ին, սեպտեմբերի 6-ին և 24-ին կնքված վարկային պայմանագրի և լրացուցիչ համաձայնագրերի հիման վրա «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերության տրամադրվել է ընդհանուր 1,786,890,000 (մեկ միլիարդ յոթ հարյուր ութսունվեց միլիոն ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար, որը, ըստ ստանձնած պարտավորության, «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության կողմից պետք է ուղղվեր ՀՀ պաշտպանության նախարարության հանդեպ ունեցած պարտքի վճարման կամ ներդրումային ծրագրի կյանքի կոչման համար, մինչդեռ ստացված 1,786,890,000 ՀՀ դրամ վարկային միջոցներից ՀՀ պաշտպանության նախարարությանը որպես պարտք տրվել է ընդհանուր 703,000,000 (յոթ հարյուր երեք միլիոն) ՀՀ դրամ, այսինքն՝ 1,083,890,000 (մեկ միլիարդ ութսուներեք միլիոն ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ պակաս, իսկ մնացած գումարը փոխանցվել է Վահե Յաքուբյանի հետ փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Ընդ որում, նշված 300,000,000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամը ՀՀ պաշտպանության նախարարությանը փոխանցվել է վարկային միջոցները ստանալուց ավելի քան մեկ տարի անց՝ 2013 թվականի դեկտեմբերի 11-ին:

16) Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող փաստաթղթերի զննության մասին արձանագրությամբ, ըստ որի՝ անշարժ գույքերի գրավադրմամբ «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերության կողմից ստացված 1,786,890,000 ՀՀ դրամից.

- 1,252,511,500 (մեկ միլիարդ երկու հարյուր հիսուներկու միլիոն հինգ հարյուր հիսունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը 02.07.2012-24.09.2012 թվականների ընթացքում մաս-մաս փոխանցվել է Վահե Յաքուբյանին կողմից հիմնադրված և նրան պատկանած «Ֆասթ Թրեք Քոնսթրաքշն» ՓԲ ընկերությանը,
- 410,000,000 (չորս հարյուր տասը միլիոն) ՀՀ դրամը փոխանցվել է «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությանը, որից էլ 403,000,000 (չորս հարյուր երեք միլիոն) ՀՀ դրամը՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը,

[10] Պնդումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ ՀՀ պաշտպանության նախարարության և <<Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության միջև կնքված նախնական և հիմնական պայմանագրերի, գործարքի վերաբերյալ ՀՀ ՊՆ ներքին աուդիտի վարչության կողմից կատարված ստուգման, ինչպես նաև կատարված առգրավումների արդյունքում նման գրություն չի հայտնաբերվել:

➢ 07.09.2012-25.10.2012թթ. ընկած ժամանակահատվածում «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերության հաշվապահ Հեղինե Դավթյանի կողմից մաս-մաս կանխիկ ելքագրվել է ընդհանուր 38,729,500 (երեսունութ միլիոն յոթ հարյուր քսանինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,

➢ «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերության տնօրեն Հովհաննես Աբրահամյանի կողմից 01.10.2014 թվականին կանխիկ ելքագրվել է 61,788,000 (վաթսունմեկ միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ:

«Ֆասթ Թրեք Քոնսթրաքշն» ՓԲ ընկերությանը փոխանցված ընդհանուր 1,252,511,500 (մեկ միլիարդ երկու հարյուր հիսուներկու միլիոն հինգ հարյուր հիսունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամից.

➢ 230,000,000 (երկու հարյուր երեսուն միլիոն) ՀՀ դրամը կանխիկացվել է նույն ընկերության հաշվապահ Արմեն Գագիկի Թադևոսյանի կողմից,

➢ 182,000,000 (հարյուր ութսուներկու միլիոն) ՀՀ դրամը փոխանցվել է «Գլենդել Հիլզ» ՓԲ ընկերությանը,

➢ 30,000,000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ փոխանցվել է «Գլենդել Հիլզ» ընկերությունների խմբի ընկերություն «Բեյզիս Կոնստ» ՍՊ ընկերությանը,

➢ «Փոխառության գումարի տրամադրում պայմ 18.09.12թ. և Վահե-Վասկեն Յաքուբյանի փոխարեն բաժնետոմսերի դիմաց պայմ. 17.08.12թ.» նպատակով ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մանուկ Վարդանյանի (ՀՀ նախագահի՝ 15.01.2010թ. հրամանագրով նշանակվել է նախարարի պաշտոնում՝ պաշտոնավարելով մինչև 2012 թվականի հունիսի 16-ը) եղբորը՝ Անդրանիկ Վարդանյանին փոխանցվել է 612,000,000 (վեց հարյուր տասներկու միլիոն) ՀՀ դրամ:

17) «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության՝ 2013 թվականի փետրվարի 2-ի՝ 12/09 թվակիր գրությամբ ներկայացված առաջարկությունների վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր ֆինանսիստ, ֆինանսաբյուջետային և պլանավորման վարչության պետ Վաղարշակ Ավետիսյանի կողմից ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին ներկայացված տեղեկանքով, ըստ որի՝ նշել է, որ Ընկերությունը, խախտելով պայմանագրային պարտավորությունները, տվյալ օրվա դրությամբ, կատարել է ընդամենը 403,000,000 ՀՀ դրամի չափով պարտավորություն, Ընկերության կողմից ներդրումային ծրագրեր և աշխատատեղերի ապահովման հստակ դրույթներ չեն սահմանվել:

Բացի այդ, Ընկերության կողմից ներկայացված առաջարկությունների, այդ թվում՝ պարտավորությունների մնացած մասը գնման առարկայի կազմում ներառված անշարժ գույքի քանդումից առաջացող նյութերի, ինչպես նաև գնման առարկայի կազմում որոշակի շենքերի վաճառքի հասույթներից կատարելու վերաբերյալ Վաղարշակ Ավետիսյանը նշել է, որ հիշյալ առաջարկություններն անհրաժեշտ է քննարկել համապատասխան շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների կամ պաշտոնատար անձանց հետ (ՀՀ ֆինանսների նախարարություն, արդարադատության նախարարություն և այլն), սահմանել Ընկերության կողմից պարտավորությունների կատարման երաշխիքները և պատասխանատվության շրջանակները, անհրաժեշտության

դեպքում կազմել ՀՀ կառավարության նոր որոշման նախագիծ և ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության՝ 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 112-Ա որոշումը:

18) ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ Ս.Սեդրակյանին հասցեագրված ՀՀ ՊՆ կոմունալ շահագործման և զորքերի բնակավորման վարչության պետ Ա.Գրիգորյանի՝ 20.03.2014 թվականի գրությամբ, ըստ որի՝ ի թիվս այլնի, նշվել է, որ նույն օրվա դրությամբ Ընկերությունը ՊՆ արտաբյուջետային հաշվին է փոխանցել 703,000,000 ՀՀ դրամ, ուստի, խնդրել է միջոցներ ձեռնարկել ՀՀ պաշտպանության նախարարության հանդեպ ընկերության պարտավորությունների կատարման ուղղությամբ:

19) ՀՀ ՊՆ գլխավոր ֆինանսիստ-ՖԲ և Պ վարչության պետ Վ.Ավետիսյանին հասցեագրված ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ Ս.Սեդրակյանի՝ 26.03.2014 թվականի գրությամբ, ըստ որի՝ ի պատասխան 20.03.2014 թվականի գրության, ի թիվս այլնի, հայտնվել է, որ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի կարգավորումը՝ իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները, ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ, ուստի, <u>չկատարված պարտավորությունների առումով դատական պաշտպանության դիմելու նպատակով անհրաժեշտ կլինի ՀՀ պաշտպանության նախարարի համաձայնությունը կամ հանձնարարականը՝ այդ եղանակով հարցը կարգավորելու համար:</u>

20) ՀՀ ՊՆ գլխավոր ֆինանսիստ-ՖԲ և Պ վարչության պետ Վ.Ավետիսյանին հասցեագրված ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ Ս.Սեդրակյանի՝ 09.04.2014 թվականի գրությամբ, ըստ որի՝ ուղարկել է «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության անվամբ սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքերի վերաբերյալ տվյալներ պարունակող՝ ՀՀ կադաստրի կոմիտեի ստացված գրության պատճենը: Եվս մեկ անգամ նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները, ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ, ուստի, չկատարված պարտավորությունների առումով դատական պաշտպանության դիմելու նպատակով անհրաժեշտ կլինի ՀՀ պաշտպանության նախարարի համաձայնությունը կամ հանձնարարականը՝ այդ եղանակով հարցը կարգավորելու համար:

21) ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին հասցեագրված ՀՀ ՊՆ կոմունալ շահագործման և զորքերի բնակավորման վարչության պետ Ա.Գրիգորյանի՝ 22.04.2014 թվականի գրությամբ, ըստ որի՝ նշել է, որ ՀՀ կառավարության՝ 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 112-Ա որոշման համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության և ընկերության միջև կնքվել է պայմանագիր, ներկայացրել է պայմանագրի պայմանները: Նշել է նաև, որ 20.03.2014 թվականի դրությամբ Ընկերությունը ՊՆ արտաբյուջետային հաշվին է փոխանցել 703 000 000 ՀՀ դրամ, այդ թվում՝ 2012 թվականին՝ 403 000 000 ՀՀ դրամ, իսկ 2013 թվականին՝ 300 000 000 ՀՀ դրամ: ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի

աշխատակազմի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանմանը՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքով պետական գրանցման ենթարկելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության կողմից հարցման արդյունքներով, վերոնշյալ անշարժ գույքը ընկերության անվամբ ենթարկվել է պետական գրանցման և հանդիսանում է ընկերության սեփականությունը:

Հաշվի առնելով, որ ընկերության կողմից խախտված են ՀՀ կառավարության հիշյալ որոշմամբ և ՀՀ ՊՆ հետ կնքված պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման չափերը և ժամանակագրությունը, ուստի խնդրել է նախարար Սեյրան Օհանյանի որոշումը՝ ընկերության կողմից չկատարված պարտավորությունների մասով դատական պաշտպանության դիմելու համար:

Գրությունը ՀՀ պաշտպանության նախարարի վարչական ապարատի քարտուղարությունում մուտքագրվել է հաջորդ օրը:

ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից նշված գրությունը ՀՀ ՊՆ կոմունալ շահագործման և զորքերի բնակավորման վարչության պետին մակագրվել է շուրջ 6 ամիս անց՝ 07.10.2014 թվականին՝ հետևյալ բովանդակությամբ. «Կքննարկենք ՀՀ նախագահի հետ, հետո կորոշենք»:

22) ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին հասցեագրված ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի խորհրդական Պավել Շադյանի կողմից ստորագրված տեղեկանքով (ամսաթիվ նշված չէ)՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ի կատարումն Ձեր հանձնարարականի՝ 2012թ. օգոստոսի 3-ին կնքվել է «Ջեներալ Տրանսուոլդ» ՄՔ ՓԲ ընկերության (նախկին «Դողագործ») ձեռք բերված անշարժ գույքը «Նայթս Բրիջ Քոմունիքեյշն էյ էմ» ընկերությանը վաճառելու պայմանագիր և ստացվել է նոտարական գրանցում: Վաճառքի գինը կազմում է 8,424500,000 դրամ:

Համաձայն պայմանագրի պահանջների՝ 1.310.000.000 դրամը պետք է վճարվեր 10 օրվա ընթացքում գույքը գնորդի կողմից սեփականության իրավունքի գրանցման պահից սկսած (2012թ. օգոստոսի 14-ին գույքն ընկերության կողմից գրանցվել է): Գրավադրերով մեր կողմից հանձնված երեք անշարժ գույքից միայն Արին-Բերդ 3, նրբանցք 2/1 շենք հասցեի անշարժ գույքը «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ին՝ 07.09-2012թ. ՀՀ պաշտպանության նախարարությանն է փոխանցվել է ընդամենը 403 մլն. դրամ: Պայմանագրով նախատեսված 2.000.000.000 դրամը՝ մինչև 2012թ. նոյեմբերի 1-ը, իսկ 2013թ. սկսած՝ յուրաքանչյուր օրացույցային տարում 1.000.000.000 դրամ, մնացորդը՝ մինչև 2017թ. դեկտեմբերի 25-ը:

Գնորդը պարտավոր է գույքի սեփականության իրավունքի գրանցման պահից սկսած մեկ ամսվա ընթացքում համաձայնեցման ներկայացնել ներդրումային ծրագիր առնվազն 10 մլն. դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով և վեց ամսվա ընթացքում ապահովել 300 աշխատատեղ: Անհրաժեշտ եմ համարում ներդրումային ծրագիրը համաձայնեցնել ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ:

Պայմանագրի մեկ օրինակը փոխանցվել է ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային և պլանավորման վարչությանը: Մեր կողմից դեռ չի վճարվել «Ջեներալ Տրանսուոլդ» ՄՔ ՓԲ ընկերության (նախկին «Դողագործ») 644695200 դրամը՝ վճարման ժամկետը՝ 2012թ. հունիս»:

23) ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին հասցեագրված ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա.Միրզաբեկյանի գրությամբ (ամսաթիվ նշված չէ)՝ որի բովանդակությունը հետևյալն է.

«Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.02.2015թ. վճռով «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» ՓԲ ընկերությունը, որը ՀՀ պաշտպանության նախարարությունից գնել էր «Ջեներալ Տրանստրլդ» ՄՔ ՓԲԸ-ի անշարժ գույքը (նախկին «Ավտոդողագործ») 8 424 500 000 դրամով, ճանաչվել է սնանկ: Այդ գումարից ընկերությունը ՀՀ ՊՆ-ին վճարել է 703 մլն դրամ: Գնված անշարժ գույքը ընկերությունը գրավադրել է «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերությանը և ստացել տարեկան 12% տոկոսադրույքով 4 201 375 ԱՄՆ դոլարի չափով վարկային միջոցներ:

Բանկը 07.12.2015թ. թիվ J-3447 գրությամբ դիմել է «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Կ.Ասատրյանին վարկատուին («Կոնվերս բանկ» ՓԲԸ) թույլատրելու գրավադրված անշարժ գույքը օտարելու «Պրոջեքտ» ՍՊԸ վարկային պարտավորությունների կատարման ապահովման համար:

Ըստ ՀՀ վարչապետի խորհրդական Հայկ Դավթյանի հետ ունեցած հեռախոսազրույցի ՀՀ նախագահի մոտ տվյալ հարցի քննարկումից հետո որոշվել է փոխարենը ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացնել ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնքի, Սեբաստիա փ.37/1 հասցեում գտնվող «Մետաքս» ԲԲԸ-ն: Ընկերության տարածքը կազմում է 1,46199 հա իր շինություններով, որը կազմում է 25399,4 քառ.մ.:

Խնդրում եմ Ձեր որոշումը»:

24) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ ընկերության գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին 29.04.2015 թվականի որոշումով, ըստ որի՝ պարտատերերի ցանկում ընդգրկվել են ֆիզիկական և իրավաբանական ընդհանուր թվով 8 անձինք, որոնցից «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ն 4.506.472 ԱՄՆ դոլարի չափով գրավով ապահովված պահանջատեր՝ առաջին տեղում, իսկ ՀՀ ՊՆ՝ որպես չապահովված «Է» հերթ՝ 4-րդ տեղում:

25) ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ Ա.Միրզաբեկյանի կողմից 11.12.2015 թվականին տված № ԴՎԱ/2993 լիազորագրով, ըստ որի՝ Ա.Միրզաբեկյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հանձնարարությամբ, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի խորհրդական Պավել Ասծատուրի Շադյանին ՀՀ պաշտպանության նախարարության անունից լիազորել է մասնակցելու Ընկերության պարտատերերի ժողովին:

26) 11.12.2015 թվականին կազմված՝ պարտատերերի ժողովի արձանագրությամբ, համաձայն որի՝ ՀՀ ՊՆ լիազորված անձ Պավել Շադյանը, ընկերության կողմից 8.424.500.000 ՀՀ դրամից ընդամենը 703.000.000 ՀՀ դրամ վճարելու և ներդրումային ծրագիրը չիրագործելու պայմաններում, հավանություն է տվել, որ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերությունում գրավադրված՝ Երևան քաղաքի Բագրատունյաց 81 հասցեում գտնվող անշարժ գույքն ուղղակի գործարքով վաճառվի «Պրոջեքթ Ի» ՍՊ ընկերությանը՝ վաճառքի գին սահմանելով 4.506.472 ԱՄՆ դոլար՝ պահպանելով բանկի գրավի իրավունքը:

27) ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացված՝ 2011 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ ՊՆ և «Ջեներալ Տրանսուոլդ ՄՔ» ՓԲ ընկերության միջև կնքված թվով 3 անշարժ գույքերի (քաղաք Երևան, Բագրատունյաց 81, 81/1 և Արին-Բերդի 3-րդ նրբանցքի 2/1 հասցեներ) տարաժամկետ առուվաճառքի պայմանագրերի հիման վրա 1.310.000.000 (մեկ միլիարդ երեք հարյուր տասը միլիոն) ՀՀ դրամ գույքի ձեռքբերման դիմաց ընդհանուր գումարով «Ջեներալ Տրանսուոլդ» ՄՔ ՓԲԸ-ի նկատմամբ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կատարված պարտավորությունների վերաբերյալ տվյալներ պարունակող ակտով և վճարման հանձնարարագրերով, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության և «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության միջև 03.08.2012 թվականին կնքված անշարժ գույքերի առուվաճառքի պայմանագրի հիման վրա «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության կողմից ՀՀ պաշտպանության նախարարությանը փոխանցված գումարների վերաբերյալ վճարման հանձնարարագրերով, համաձայն որոնց.

ՀՀ պաշտպանության նախարարությունը նշված առուվաճառքների արդյունքում վճարել է ընդհանուր 1,310,000,000 ՀՀ դրամ: Մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեհամարից «Ջեներալ Տրանսուոլդ ՄՔ» ՓԲ ընկերության սնանկության հատուկ հաշվեհամարին փաստացի փոխանցվել է 1,194,857,204 (մեկ միլիարդ հարյուր իննսունչորս միլիոն ութ հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր չորս) ՀՀ դրամ, իսկ 115,142,796 (հարյուր տասնհինգ միլիոն հարյուր քառասուներկու հազար յոթ հարյուր իննսունվեց) ՀՀ դրամը հաշվանցվել է (1,194,857,204+115,204+115142,204+115142796=204+1151427961,204+1151427961310,204+1151427961310000,204+11514279613100000000)204+11514279613100000000:204+1151427961310000000 204+11514279613100000000): Փոխարենը ստացվել է 703,000,000 ՀՀ դրամ, այսինքն՝ 607,000,000 (վեց հարյուր յոթ միլիոն) ՀՀ դրամ պակաս:

28) ՀՀ նախագահի աշխատակազմից սույն թվականի հունիսի 24-ին ստացված՝ 23.06.2022 թվականի Հ ԱՂ 649-2022 գրությամբ և կից փաստաթղթերով, համաձայն որոնց՝ ՀՀ նախագահի նստավայրում Վահե Յաքուբյանի կողմից 2008-2017 թվականների ընթացքում Վահե Յաքուբյանը Սերժ Սարգսյանին այցելել է ընդհանուր 28 անգամ, այդ թվում՝

➢ ՀՀ կառավարության՝ 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 112-Ա որոշման կայացումից ընդամենը մի քանի օր առաջ՝ 2012 թվականի հունվարի 28-ին՝ ժամը՝ 12:30-ին,

➢ «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Բանկ) և Վահե Յաքուբյանին պատկանած «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերության տնօրեն Հովհաննես Աբրահամյանի միջև 02.07.2012թ. կնքված թիվ 347868 վարկային պայմանագրի հիման վրա 18.07.2012թ. թիվ 350106 համաձայնագրի կնքման օրը՝ ժամը՝ 13:00-ին (նշված փաստաթղթերի հիման վրա Բանկի կողմից «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերությանը 18.07.2012թ. համաձայնագրով տրամադրվել է 860,000 (ութ հարյուր վաթսուն հազար) ԱՄՆ դոլար[11]):

➢ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի խորհրդական Պավել Ասծատուրի Շադյանի անվամբ ՊՆ/510-1356 լիազորագրի տրման օրը՝ 2012 թվականի սեպտեմբերի 5-ին՝ ժամը 10:00-ին,[12] (նշված լիազորագրով Պավել Ասծատուրի Շադյանը լիազորվել է «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության հետ 03.08.2012 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի գործողության ընթացքում հանդես գալ ՀՀ ՊՆ անունից՝ տրամադրել գրություններ, համաձայնություններ, ներկայացնել առարկություններ կամ առաջարկություններ, ընդունել հաշվետվություններ):

Հարկ է նշել նաև, որ հիշատակված լիազորագրի հիման վրա կրկին նույն օրը՝ 2012 թվականի սեպտեմբերի 5-ին, Պավել Շադյանի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության անունից կնքվել է թիվ ՊՆ/510-1356 համաձայնագիրը[13], ըստ որի՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը տվել է իր համաձայնությունը «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության կողմից Արին Բերդի 3 նրբանցք 2/1 շենք հասցեի անշարժ գույքը երրորդ անձ գրավատուի ռեժիմով գրավադնելու «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերության մոտ՝ «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերությանը վարկավորելու համար:

29) ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱ կազմակերպությունից ստացված՝ Երևան քաղաքի Բագրատունյաց 81, 81/1 և Արին-Բերդի 3-րդ նրբանցքի 2/1 հասցեի անշարժ գույքերի վերաբերյալ նշանակված դատաապրանագիտական փորձաքննության եզրակացությամբ, համաձայն որի՝

1. Փորձաքննության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքների համադրված վերլուծության տվյալները հիմք են տալիս եզրակացնել, որ ՀՀ Երևան քաղաք Շենգավիթ վարչական շրջան Բագրատունյաց փողոց թիվ 81 հասցեում գտնվող 22.1007 հա մակերեսով հողամասից և 123899.04 քմ մակերեսով շենք շինություններից բաղկացած անշարժ գույքի ընդհանուր շուկայական արժեքը, հիմք ընդունելով փորձաքննությանը տրամադրված ֆիզիկական և որակական տվյալների

---

[11] Տե՛ս բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները զննելու մասին արձանագրությունը և կից փաստաթղթերի պատճենները՝ հատոր 16, գ/թ՝ 1-280:

[12] Տե՛ս կադաստրային գործի հատոր 6, գ/թ՝ 138:

[13] Տե՛ս կադատրային գործի հատոր 6, գ/թ՝ 137:

վերաբերյալ ելակետային տվյալները, 16.12.2011 թվականի դրությամբ կազմել է 4700900000 (չորս միլիարդ յոթ հարյուր միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ:

Փորձաքննության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքների համադրված վերլուծության տվյալները հիմք են տալիս եզրակացնել, որ ՀՀ Երևան քաղաք Շենգավիթ վարչական շրջան Բագրատունյաց փողոց թիվ 81 հասցեում գտնվող 22.1007 հա մակերեսով հողամասից, 122815.32 քմ մակերեսով շենք շինություններից և 525 քմ մակերեսով ծածկից բաղկացած անշարժ գույքի ընդհանուր շուկայական արժեքը, հիմք ընդունելով փորձաքննությանը տրամադրված ֆիզիկական և որակական տվյալների վերաբերյալ ելակետային տվյալները, 02.02.2012 թվականի դրությամբ կազմել է 4693900000 (չորս միլիարդ վեց հարյուր իննսուներեք միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ (մանրամասն տես սույն եզրակացության հետազոտական մասում):

Փորձաքննության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքների համադրված վերլուծության տվյալները հիմք են տալիս եզրակացնել, որ ՀՀ Երևան քաղաք Շենգավիթ վարչական շրջան Բագրատունյաց փողոց թիվ 81 հասցեում գտնվող 22.1007 հա մակերեսով հողամասից, 122815.32 քմ մակերեսով շենք շինություններից և 525 քմ մակերեսով ծածկից բաղկացած անշարժ գույքի ընդհանուր շուկայական արժեքը 03.08.2012 թվականի դրությամբ կազմել է 4959900000 (չորս միլիարդ ինը հարյուր հիսունինը միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ (մանրամասն տես սույն եզրակացության հետազոտական մասում):

2. Փորձաքննության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքների համադրված վերլուծության տվյալները հիմք են տալիս եզրակացնել, որ ՀՀ Երևան քաղաք Շենգավիթ վարչական շրջան Բագրատունյաց փողոց թիվ 81/1 հասցեում գտնվող 560 քմ մակերեսով հողամասից և 1720 քմ մակերեսով շենք շինություններից բաղկացած անշարժ գույքի ընդհանուր շուկայական արժեքը 16.12.2011 թվականի դրությամբ կազմել է 71650000 (յոթանասունմեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Փորձաքննության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքների համադրված վերլուծության տվյալները հիմք են տալիս եզրակացնել, որ ՀՀ Երևան քաղաք Շենգավիթ վարչական շրջան Բագրատունյաց փողոց թիվ 81/1 հասցեում գտնվող 560 քմ մակերեսով հողամասից և 1720 քմ մակերեսով շենք շինություններից բաղկացած անշարժ գույքի ընդհանուր շուկայական արժեքը 02.02.2012 թվականի դրությամբ կազմել է 72200000 (յոթանասուներկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Փորձաքննության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքների համադրված վերլուծության տվյալները հիմք են տալիս եզրակացնել, որ ՀՀ Երևան քաղաք Շենգավիթ վարչական շրջան Բագրատունյաց փողոց թիվ 81/1 հասցեում գտնվող 560 քմ մակերեսով հողամասից և 1720 քմ մակերեսով շենք շինություններից բաղկացած անշարժ գույքի ընդհանուր շուկայական արժեքը 03.08.2012 թվականի դրությամբ կազմել է 76320000 (յոթանասունվեց միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (մանրամասն տես սույն եզրակացության հետազոտական մասում):

3. Փորձաքննության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքների համադրված վերլուծության տվյալները հիմք են տալիս եզրակացնել, որ ՀՀ Երևան քաղաք Արին Բերդ փողոց 3-րդ նրբանցք թիվ 2/1 հասցեում գտնվող 42000 քմ մակերեսով հողամասից և 16000 քմ մակերեսով շենք շինություններից բաղկացած անշարժ գույքի ընդհանուր շուկայական արժեքը 16.12.2011 թվականի դրությամբ կազմել է 809790000 (ութ հարյուր ինը միլիոն յոթ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

Փորձաքննության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքների համադրված վերլուծության տվյալները հիմք են տալիս եզրակացնել, որ ՀՀ Երևան քաղաք Արին Բերդ փողոց 3-րդ նրբանցք թիվ 2/1 հասցեում գտնվող 42000 քմ մակերեսով հողամասից և 16000 քմ մակերեսով շենք շինություններից բաղկացած անշարժ գույքի ընդհանուր շուկայական արժեքը 02.02.2012 թվականի դրությամբ կազմել է 813560000 (ութ հարյուր տասներեք միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

4.Փորձաքննության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքների համադրված վերլուծության տվյալները հիմք են տալիս եզրակացնել, որ ՀՀ Երևան քաղաք Արին Բերդ փողոց 3-րդ նրբանցք թիվ 2/1 հասցեում գտնվող 42000 քմ մակերեսով հողամասից և 16000 քմ մակերեսով շենք շինություններից բաղկացած անշարժ գույքի ընդհանուր շուկայական արժեքը 03.08.2012 թվականի դրությամբ կազմել է 848080000 (ութ հարյուր քառասունութ միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամ (մանրամասն տես սույն եզրակացության հետազոտական մասում):

Փորձաքննության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքների համադրված վերլուծության տվյալները հիմք են տալիս եզրակացնել, որ ՀՀ Երևան քաղաքի Բագրատունյաց փողոց թիվ 81, 81/1 և ՀՀ Երևան քաղաքի Արին Բերդ փողոց 3-րդ նրբանցք թիվ 2/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերի շուկայական ընդհանուր արժեքը 16.12.2011թ.-ի կազմել է 5582340000 (հինգ միլիարդ հինգ հարյուր ութսուներկու միլիոն երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

Փորձաքննության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքների համադրված վերլուծության տվյալները հիմք են տալիս եզրակացնել, որ ՀՀ Երևան քաղաքի Բագրատունյաց փողոց թիվ 81, 81/1 և ՀՀ Երևան քաղաքի Արին Բերդ փողոց 3-րդ նրբանցք թիվ 2/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերի շուկայական ընդհանուր արժեքը 02.02.2012թ.-ի կազմել է 5579660000 (հինգ միլիարդ հինգ հարյուր յոթանասունինը միլիոն վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Փորձաքննության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքների համադրված վերլուծության տվյալները հիմք են տալիս եզրակացնել, որ ՀՀ Երևան քաղաքի Բագրատունյաց փողոց թիվ 81, 81/1 և ՀՀ Երևան քաղաքի Արին Բերդ փողոց 3-րդ նրբանցք թիվ 2/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերի շուկայական ընդհանուր արժեքը 03.08.2012թ.-ի կազմել է 5.884.300.000 (հինգ միլիարդ ութ հարյուր ութսունչորս միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ (մանրամասն տես սույն եզրակացության հետազոտական մասում):

30) «Գլենդել Հիլզ» ՓԲ ընկերության տնօրեն Էդուարդ Համլետի Մելիքյանի ցուցմունքներով այն մասին, որ Վահե-Վասկեն Յաքուբյանին ճանաչում է 2003

թվականից: Վերջինս ԱՄՆ քաղաքացի է, մասնագիտությամբ իրավաբան է, և 1990-ական թվականներին ծավալել է փաստաբանական գործունեություն: Մասնավորապես՝ տարբեր գործերով հիմնականում Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում ներկայացրել է Հայաստանի Հանրապետության շահերը: 2005 թվականից նրա հետ սկսել են ծավալել կառուցապատման գործունեություն: Նույն թվականին Վահե Յաքուբյանը հիմնել է «Գլենդել Հիլզ» ՓԲ ընկերությունը, որի գործադիր տնօրեն նշանակվել է ինքը: Իրականացրել է նաև Վահե Յաքուբյանին պատկանած այլ ընկերությունների, այդ թվում՝ «Մետաքս» ԲԲ ընկերության կառավարումը: Հաշվի առնելով, որ Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում Վահե Յաքուբյանը ներկայացրել է ՀՀ շահերը, ուստի, հաճախակի է հանդիպել ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի հետ: Վերջինիս առաջարկով ստանձնել է նաև «Թի Էս Ինվեստմենթ» ընկերության կողմից նույն դատարանում ՀՀ դեմ ներկայացված 50 միլիոն ԱՄՆ դոլարի պահանջի հայցով ՀՀ շահերի պաշտպանությունը: Այդ գործի նախապատմությունը եղել է հետևյալը՝ սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը պատկանած ավտոդողերի գործարանի սնանկության հիման վրա 2002 թվականին ստեղծվել է «Ջեներալ Տրանսուորլդ ՄՔ» ընկերությունը, որը տնօրինելու լիազորությունը տրվել է ամերիկյան «Թի Էս Ինվեստմենթ» ընկերության ներկայացուցչին: Ընկերության տնօրինությանն է անցել նաև ավտոդողերի գործարանի՝ Երևան քաղաքի Բագրատունյաց 81, 81/1 և Արին-Բերդի 3-րդ նրբանցքի 2/1 հասցեների անշարժ գույքերը:

ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի առաջարկով Վահե Յաքուբյանը ստանձնել է Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում «Թի Էս Ինվեստմենթ» ընկերության ներկայացուցչի կողմից Հայաստանի Հանրապետության դեմ հարուցված հայցով ՀՀ շահերի պաշտպանությունը: Այդ գործընթացի նկատմամբ որպես պատասխանատու Սերժ Սարգսյանի կողմից նշանակվել է այդ ժամանակ նրա խորհրդական, այնուհետև ՀՀ զինվորական դատախազ Գևորգ Կոստանյանը:

Սերժ Սարգսյանը Վահե Յաքուբյանին առաջարկել է Լոնդոնի արբիտրաժային դատարանում կատարել անհրաժեշտ ծախսերը (իրավաբանական և այլ ծառայություններ)[14]՝ պայմանով, որ դա կփոխհատուցվի վերոնշյալ գույքերը որպես սեփականություն նրան տրամադրելով: Վահե Յաքուբյանն ընդունել է նշված առաջարկը և պայմանավորվածության համաձայն խոստացել գործարանի տարածքում կատարել ներդրումներ՝ կառուցել արևային առաջին կայանը Հայաստանում:

Արբիտրաժային գործի քննության ընթացքում Վահե Յակուբյանը սնանկության գործով կառավարչի միջոցով կատարել է նաև գույքի պահպանման ծախսերը:

---

[14] Հատկանշական է, որ ՀՀ էկոնոմիկայի նախկին նախարար, ներկայում ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյանի, վերջինի նախկին խորհրդական Էմմա Հակոբյանի ցուցմունքների համաձայն՝ Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանում քննված գործի հետ կապված ՀՀ պետական բյուջեի հաշվին կատարվել են 1,000,000-1,500,000 ԱՄՆ դոլարի չափով, այդ թվում՝ փաստաբանական ծախսեր: Տվյալ ծախսերի որոշ մասը ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարելու հանգամանքը հաստատվել է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից ստացված՝ ՀՀ կառավարության թվով 3 որոշումներով:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնվելու ժամանակ՝ 2011 թվականի ամռանը, Վահե Յաքուբյանը զանգահարել է իրեն և պահանջել է գնալ զինվորական դատախազ Գևորգ Կոստանյանի աշխատասենյակ, ու քննարկել անվադողերի գործարանի հետ կապված ներդրումային ծրագիրը: Ասել է նաև, որ «Ջեներալ Տրանսուոլդ ՄՔ» ՓԲ ընկերության սնանկության գործով Կարեն Ասատրյանին իրեն պատկանող ընկերություններից մեկի միջոցներից տրամադրի 60 (վաթսուն) կամ 90.000.000 (իննսուն միլիոն) ՀՀ դրամի չափով գումար, որ այդ գումարով վճարվի ՀՀ կառավարության շենքի դիմաց բողոքի ակցիաներ անող աշխատակիցներին: Դրանից հետո գնացել է ՀՀ զինվորական դատախազ Գևորգ Կոստանյանի աշխատասենյակ: Գևորգ Կոստանյանի աշխատասենյակում գտնված Կարեն Ասատրյանն ասել է, որ սնանկության գործով խնդիրներից առաջնահերթ է այն, որ վճարվի աշխատակիցների աշխատավարձը: Գևորգ Կոստանյանին ասել է, որ խոսել է Վահեի Յաքուբյանի հետ և տեղյակ է, որ նշված նպատակով Կարեն Ասատրյանին պետք է գումար տա: Գևորգ Կոստանյանն ասել է նաև, որ նշված գործընթացներից հետո, երբ տվյալ գործարանն օտարվի Վահե Յաքուբյանիին, հիշյալ ներդրումային ծրագիրը պետք է անպայման կյանքի կոչվի: Բացի այդ, ասել է նաև, որ այդ ծրագրի իրականացումը կարևոր է, դրա արդյունքում կբարձրանա ՀՀ ռեյտինգն այն իմաստով, որ պետության ներդրումային ծրագրերն իրականացվում են ներդրողների բարեխղճության արդյունքում: Այդ հանգամանքը ևս կարող էր օգտագործվել Լոնդոնի արբիտրաժային դատարանում՝ ապացուցելու համար այն փաստը, որ պետությունը չի խոչընդոտել, այլ, ընդհակառակը, օժանդակել է ներդրողների գործունեությանը:

Մի քանի օր անց իր կամ Վահե Յաքուբյանին պատկանող ընկերություններից մեկի ու Կարեն Ասատրյանի միջև կնքվել են նոտարական վավերացում չպահանջող փոխառության պայմանագրեր, որոնց հիման վրա վերջինին տվել է 60 (վաթսուն) կամ 90.000.000 (իննսուն միլիոն) ՀՀ դրամ:

Լոնդոնի արբիտրաժային դատարանը հիշյալ գործով որոշում կայացրել է հօգուտ Հայաստանի Հանրապետության:

Նշված գումարը Կարեն Ասատրյանին տալուց որոշակի ժամանակ հետո Վահե Յաքուբյանից տեղեկացել է, որ նշված գործարանը պետք է ձեռք բերվի ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ վճարելով ընկերության ունեցած պարտավորությունների հանրագումարային արժեքը:

2011 թվականի վերջին Վահե Յաքուբյանից տեղեկացել է, որ «Ջեներալ Տրանսուորլդ ՄՔ» ընկերության սնանկության վարույթի շրջանակներում կայացած աճուրդում ՀՀ պաշտպանության նախարարությունը 1.3 միլիարդ ՀՀ դրամով գնել է գործարանը և մեխանիզմներ են մշակում, թե ինչպես պետք է այն օտարվի իրեն պատկանող «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությանը: Միաժամանակ ասել է, որ «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության ժամանակավոր տնօրեն նշանակի, մինչև իր կողմից կնշանակվի հիմնական տնօրեն: Ընկերության տնօրեն նշանակել է իր օգնական Աշոտ Միերի Հովհաննիսյանին:

1.3 միլիարդ ՀՀ դրամի հաշվարկը կատարվել է հետևյալ կերպ.

«Ջեներալ Տրանսուորլդ ՄՔ» ընկերությունն աշխատակիցներին ընդհանուր առմամբ պարտք է եղել շուրջ 600 միլիոն ՀՀ դրամ աշխատավարձ, ինչպես նաև պետության նկատմամբ ունեցել է շուրջ 700 միլիոն ՀՀ դրամի չափով պարտավորություններ (հարկեր) և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրամադրվելիք 1.3 միլիարդ ՀՀ դրամը պետք է ուղղվեր այդ նպատակներով:

Վահե Յաքուբյանից տեղեկացել է նաև, որ Սերժ Սարգսյանի հետ ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը նույն գույքը շուրջ 8.4 միլիարդ ՀՀ դրամով պետք է վաճառեր իրեն պատկանող «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությանը: Վահե Յաքուբյանի կողմից 8.4 միլիարդ ՀՀ դրամը պետք է վճարվեր ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների համար բազմաբնակարան շենքերի կառուցման համար պետության կողմից տրամադրվելիք 80 միլիարդ ՀՀ դրամի չափով շինարարական աշխատանքների կատարման արդյունքում գոյանալիք շահույթից:

Ըստ Վահե Յաքուբյանի՝ մի քանի ամիս անց ՀՀ կառավարության կողմից կայացվել է գաղտնի որոշում, որով ՀՀ պաշտպանության նախարարությանը թույլատրել նշված գործարանը շուրջ 8,4 միլիարդ ՀՀ դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել «Նայթս Բրիջ Քոմունիքեյշն Էյ Էմ» ՓԲ ընկերությանը: Վահե Յաքուբյանին առաջարկել է ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքել նախնական պայմանագիր:

Դրանից հետո՝ 2012 թվականի ապրիլի 19-ին, Վահե Յաքուբյանին պատկանող «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերության տնօրեն Հովհաննես Աբրահամյանի, ով հանդիսացել է իր մորաքրոջ ամուսինը, և ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցչի միջև կնքվել է պայմանագիր[15], համաձայն որի՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում գտնվող հողատարածքում Վահե Յաքուբյանը պետք է կառուցեր բազմաբնակարան շենքեր: Իրենց կողմից մշակվել է ճարտարապետական նախագիծ, որը համաձայնեցվել է ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հետ: Շինարարական աշխատանքները պլանավորվել է կատարել 5 տարվա ընթացքում, ուստի, ՀՀ պաշտպանության նախարարության և «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության միջև կնքված առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ գույքի դիմաց վճարումը պետք է կատարվեր մինչև 2017 թվականը:

Մի քանի ամիս անց Վահե Յաքուբյանը «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության տնօրեն նշանակել է Աշոտ Գոմցյանին:

Դրանից հետո նշված գործընթացներին ըստ էության չի խառնվել:

---

15 Էդուարդ Մելիքյանի կողմից ներկայացվել է նշված պայմանագրի պատճենը, համաձայն որի՝ 19.04.2012 թվականին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի և <<Թի Թի Էյ Քոնսալթինգ>> ՓԲ ընկերության տնօրեն Հովհաննես Աբրահամյանի միջև կնքվել է պետական գնման մասին № 1 պայմանագիրը: Ըստ պայմանագրի՝ ընկերությունը պարտավորվել է Երևան, Գյումրի և Գորիս քաղաքներում կառուցել բազմաբնակարան շենքեր: Մատուցվելիք ծառայությունների արժեքը կազմել է 3.809.216.000 (երեք միլիարդ ութ հարյուր ինը միլիոն երկու հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ: Ընդ որում, ըստ պայմանագրի՝ շինարարության մեկ քառակուսի մետրի (հաշվարկի համար հիմք է հանդիսացել գույքի արտաքին մակերեսը) արժեքը կազմել է 212.000 (երկու հարյուր տասնեկու հազար ՀՀ դրամ): Պայմանագրում շինարարական աշխատանքների մեկնարկի և ավարտի ժամանակահատվածի, վճարման կարգի և դրա ժամանակահատվածի վերաբերյալ դրույթներ չեն ամրագրվել:

Հատկանշական է, որ նշված պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարությունում հաշվառած լինելու հանգամանքը պարզելու համար գրություն է հասցեագրվել ՀՀ պաշտպանության նախարարություն, որտեղից ստացված պատասխան գրության համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունում պայմանագրի վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:

Հետագայում Վահե Յաքուբյանից տեղեկացել է, որ նա «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերության սեփականատեր Էդուարդո Էոնեկյանի հետ պայմանավորվել է, որ իրեն վարկ տրամադրի, որով պետք է կատարի ՀՀ պաշտպանության նախարարության հանդեպ ունեցած պարտավորությունը: Այդ նպատակով «Նայթս Բրիջ Քոմունիքեյշն Էյ Էմ» ՓԲ ընկերության միջոցով պետք է գրավոր դիմեն պաշտպանության նախարարություն, որ թույլատրվի գործարանի ամբողջ տարածքը կամ դրա մի մասը «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերության վարկավորման համար գրավադրվի նշված բանկում: Ասել է նաև, որ պայմանավորվել են, և պաշտպանության նախարարությունը համաձայնությունը տալու է:

Դրանից հետո, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրված համաձայնության հիման վրա, գործարանը գրավադրվել է բանկում և ստացվել են վարկային միջոցներ, որոնց մի մասը՝ 403.000.000 (չորս հարյուր երեք միլիոն) ՀՀ դրամը, 2012 թվականի սեպտեմբերին փոխանցվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը, իսկ մնացած մասը Վահե Յաքուբյանի ցուցումով փոխանցվել են «Գլենդել Հիլզ» ՓԲ ընկերությունների հաշվեհամարներին, նրա մատնանշած անձանց:

2013 թվականի դեկտեմբերին Վահե Յաքուբյանից տեղեկացել է, որ պետական միջոցների սղության պատճառով շինարարական ծրագիրը չի իրականացվելու: Վահե Յաքուբյանն իրեն խնդրել է պարզել, թե որքան է կազմել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հիշյալ անշարժ գույքերի ձեռքբերման դիմաց վճարած գումարը: ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Պավել Շադյանից պարզել է, որ այն կազմել է 650 կամ 690.000.000 (վեց հարյուր իննսուն միլիոն) ՀՀ դրամ: Այդ մասին տեղեկացրել է Վահե Յաքուբյանին, ով հրահանգել է «Գլենդել Հիլզ» ՓԲ ընկերության միջոցներից 300.000.000 ՀՀ դրամ փոխանցել «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ընկերության հաշվեհամարին, որ այն փոխանցվի ՀՀ ՊՆ: Այդպես էլ արվել է:

Այսինքն՝ ՀՀ պաշտպանության նախարարությանն ընդհանուր առմամբ փոխանցվել է ընդամենը 703,000,000 (յոթ հարյուր երեք միլիոն) ՀՀ դրամ:

Ըստ Վահե Յաքուբյանի՝ պաշտպանության նախարարությանն ընդհանուր 703.000.000 ՀՀ դրամ փոխանցելով «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությունը փաստացի կատարել է պարտավորությունները, որը, ըստ նրա, համաձայնեցրել է Հայաստանի Հանրապետության ղեկավարության՝ ենթադրաբար ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի հետ, քանի որ մինչ այդ Վահեի Յաքուբյանը բոլոր պայմանավորվածությունները կամ դրա որոշ մասը ձեռք է բերել նրա հետ:

2014 թվականի հոկտեմբերի 1-ին, կրկին Երևան քաղաքի Շենգավիթ Բագրատունյաց պողոտա 81 հասցեում գտնվող անշարժ գույքի գրավադրմամբ, «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերությանը տրամադրվել է ևս 152,000 (հարյուր հիսուներկու հազար) ԱՄՆ դոլար, որն ուղղվել է մինչ այդ ստացված վարկի տոկոսների մարմանը:

Այսինքն՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը պատկանած անշարժ գույքերի գրավադրման դիմաց «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերության ընդհանուր առմամբ

ստացվել է 4,352,000 (չորս միլիոն երեք հարյուր հիսուներկու հազար) ԱՄՆ դոլարի չափով վարկ:

2015 թվականին «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությունը ճանաչվել է սնանկ: Նույն թվականին խնդրո առարկա գույքն[16] օտարվել է բանկի մատնանշած ընկերությանը[17]:

«Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության տնօրեն Աշոտ Միերի Հովհաննիսյանի ցուցմունքներով այն մասին, որ 2004-2015 թվականներին աշխատել է «Գլենդել Հիլզ» ՓԲ ընկերությունում և դրան փոխկապակցված ընկերություններում՝ զբաղեցնելով տարբեր, այդ թվում՝ տնօրենի պաշտոններ: Փոխկապակցված ընկերություններից հանդիսացել է նաև «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության տնօրենը: Այդ պաշտոնը ստանձնել է 2011 թվականի վերջին՝ «Գլենդել Հիլզ» ընկերության գործադիր մարմնի ղեկավար Էդուարդ Մելիքյանի առաջարկով: Ըստ Էդուարդ Մելիքյանի՝ «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության տնօրենի պաշտոնը ստանձնելու էր կարճաժամկետ՝ մինչև «Գլենդել Հիլզ» և փոխկապակցված ընկերությունների հիմնադիր Վահե Վասկեն-Յաքուբյանը նոր տնօրեն կնշանակեր: Էդուարդ Մելիքյանից տեղեկացել է, որ ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարության համար շինարարական ծրագիր պետք է իրականացներ:

Չի հիշում «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում դիմել է ՀՀ կառավարություն՝ ցանկություն հայտնելով գնել ՀՀ պաշտպանության նախարարությանը պատկանած՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 81, 81/1 և Արին Բերդի 3-րդ նրբանցք 2/1 հասցեներում գտնված անշարժ գույքերը, թե՝ ոչ, սակայն եթե Էդուարդ Մելիքյանը կամ Վահե Յաքուբյանը նման հանձնարարությունն են տվել իրեն, ուրեմն հավանաբար դիմել է: Ընկերության տնօրենի պաշտոնը զբաղեցրել է ձևական՝ զրկված լինելով ընկերության տնօրենին վերապահված՝ ինքնուրույն որոշումներ կայացնելու և գործառութային այլ լիազորություններից:

ՀՀ կառավարության՝ 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 112-Ա որոշումը չի հիշում:

«Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 2012 թվականի ապրիլի 23-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագիրը կնքելու համար «Գլենդել Հիլզ» և փոխկապակցված ընկերությունների իրավաբան Դերենիկ Գյոզալյանի անվամբ տվել է լիազորագիր: Չի հիոշում մինչ ՀՀ կառավարության հիշյալ որոշման կայացումը և

16 Օտարվել է 3 անշարժ գույքերից մակերեսով ամենամեծը՝ Երևան քաղաքի Բագրատունյաց 81 հասցեի անշարժ գույքը (գործարան):

17 Գույքն օտարվել է Վահե Յաքուբյանին պատկանած, 2015 թվականի հունիսի 26-ին Էդուարդ Մելիքյանի կողմից հիմնադրված <<Պրոջեքթ>> ՍՊ ընկերությանը, որի տնօրենը գործարքի կատարման ժամանակ հանդիսացել է Սասուն Մուրադյանը, ով հանդիսացել է Վահե Յաքուբյանի հետ փոխկապակցված անձանցից և զբաղեցրել է նրան պատկանած ընկերություններից մի քանիսի տնօրենի պաշտոնը:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ պայմանագրում առկա չէ նշում այն մասին, որ <<Պրոջեքթ>> ՍՊ ընկերության կողմից գույքի ձեռքբերման դիմաց վճարվել է բանկի կողմից <<Թի Թի Էյ Քոնսալթինգ>> ՓԲ ընկերության կողմից տրամադրված վարկի և տոկոսագումարների՝ ընդհանուր շուրջ 4,5 միլիոն ԱՄՆ դոլարի չափով գումարը կամ այն փոխանցվել է համապատասխան հաշվեհամարին, ինչը ցայտուն կերպով վկայում է գործարքի ձևական լինելու և այդ կերպ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու մասին:

նախնական պայմանագիրը կնքելը ներդրումային ծրագիր եղել է, թե՝ ոչ: Չի հիշում նաև, թե նախնական պայմանագրի բովանդակությունն ում կողմից է կազմվել:

Ընկերության մասնակցությամբ կատարված հետագա գործարքներից տեղյակ չէ, քանի որ չի հանդիսացել ընկերության տնօրենը:

Նշել է նաև, որ «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ընկերության տնօրեն Հովհաննես Աբրահամյանը համակարգել է «Գլենդել Հիլզ» ընկերությունների խմբի կողմից կատարած շինարարական աշխատանքների որոշ մասը:

«Գլենդել Հիլզ» ընկերությունների խմբի ընկերություն հանդիսացել է նաև «Բեյզիզ Կոնստ» ՍՊ ընկերությունը:

31) «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության տնօրեն Աշոտ Արշակի Գոմցյանի ցուցմունքներով այն մասին, որ 2008-2012 թվականներին աշխատել է «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերությունում՝ որպես վերլուծաբան, փաստաթղթերի ձևակերպան գործառնությունների իրականացման բաժնի պետ, բանկի վարչության անդամ:

Վահե Յաքուբյանին ճանաչել է 2009 թվականից: Նրա հետ ծանոթացել է «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերության գլխամասում: Վահե Յաքուբյանը հանդիսացել է բանկի սեփականատեր Էդուարդո Էռնեկյանի ընկերը:

2012 թվականի մարտին կամ ապրիլին Վահե Յաքուբյանն առաջարկել է որպես տնօրեն աշխատանքի անցնել իրեն պատկանող «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությունում: Վահե Յաքուբյանից տեղեկացել է, որ «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությունը ձեռք է բերելու նախկին անվադողերի գործարանը և վերագործարկելու է այն: Կարծել է, որ առաջարկը կարող է շահավետ ու հեռանկարային լինել, ուստի, համաձայնվել է նրա առաջարկին: 2012 թվականի մայիսից ստանձնել է ընկերության տնօրենի պաշտոնը:

Մինչ այդ ընկերությունը որևէ գործունեություն չի ծավալել: Վահե Յաքուբյանն իրեն ցույց է տվել ՀՀ կառավարության համապատասխան որոշումը, ըստ որի՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը պետք է նշված գործարանը վաճառեր «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությանը: Գործարանի ձեռքբերման վերաբերյալ բոլոր պայմանավորվածությունները ձեռք են բերվել Վահե Յաքուբյանի կողմից:

2012 թվականի օգոստոսին Վահե Յաքուբյանն ասել է, որ գնա նոտարական գրասենյակ և անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր ստորագրի: Գնացել է այնտեղ և ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակից Պավել Շադյանի հետ ստորագրել պայմանագիրը, ըստ որի՝ ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարությունից գնել է Երևան քաղաքի Բագրատունյաց 81, 81/1 և Արին-Բերդի 3-րդ նրբանցք 2/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերը: Չի հիշում թե ով է կազմել պայմանագրի նախագիծը: Պայմանագրի կնքման ժամանակ նոտարական գրասենյակ է ներկայացել նաև «Ջեներալ Տրանսուորլդ ՄՔ» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանը, ում հետ մինչ այդ հանդիպել է Պավել Շադյանի աշխատասենյակում: Կարեն Ասատրյանը գործարքի հետ կապված տվել է իր համաձայնությունը:

Նույն թվականի սեպտեմբերին, Վահե Յաքուբյանն իրեն ասել է, որ Երևան քաղաքի Բագրատունյաց 81 հասցեում գտնվող անշարժ գույքը «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերությունում գրավադնելու թույլտվություն ստանալու համար գրություն հասցեագրի ՀՀ պաշտպանության նախարարին: Տվյալ գույքի գրավադրման դիմաց բանկը Վահե Յաքուբյանին պատկանող մեկ այլ՝ «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերությանը պետք է տրամադրեր վարկ: ՀՀ պաշտպանության նախարարությունը տվել է համաձայնություն և գույքը գրավադրվել է բանկում: Ստացված վարկային միջոցներից ՀՀ պաշտպանության նախարարությանը փոխանցվել է շուրջ 400.000.000 (չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ: Ստացված վարկային միջոցների չափի վերաբերյալ տեղեկություն չունի: Ֆինանսական հարցերով որոշումները կայացվել են Վահե Յաքուբյանի կողմից: Դրանից հետո Վահե Յաքուբյանի խնդրանքով մեկ անգամ ևս «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերությունում ստորագրել է գրավի պայմանագիր: Այս դեպքում ևս վարկառուն հանդիսացել է «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերությունը:

Դրանից հետո գործարանի վերագործարկման ուղղությամբ առարկայական քայլեր չեն ձեռնարկվել, բացառությամբ, որ Վահե Յաքուբյանը տարբեր ներդրողների հետ ունեցել է քննարկումներ: Վերջիններից հիշում է մի սիրիահայի, ով զբաղվել է արևային էներգիայի համար նախատեսված սարքավորումների արտադրությամբ: Ներդրումային ծրագիրն իրականացնելու համար աշխատակիցների թեկնածուներ չեն եղել: Եղել են ներդրումային բազմաթիվ ծրագրեր, որոնք ի վերջո կյանքի չեն կոչվել: Երբ ընդունել է Վահե Յաքուբյանի՝ նշված ընկերության տնօրենի պաշտոնը ստանձնելու առաջարկը, կարծել է, որ ներդրումներ կատարվելու են նրա կողմից, սակայն հետագայում պարզ է դարձել, որ վերջինը չի պատրաստվել գործարանում ներդրումներ կատարել: Վահե Յաքուբյանից հետաքրքրվել է, որ եթե ընկերությունը գումար չի ունեցել անշարժ գույքերի ձեռքբերման դիմաց վճարելու, ապա ինչ միջոցներով է կատարելու պայմանագրում նշված՝ 10.000.000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլարի չափով ներդրումը, սակայն Վահե Յաքուբյանից հստակ պատասխան չի ստացել, բացառությամբ, որ, ըստ Վահե Յաքուբյանի՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ նշված ավելի քան 8 միլիարդ ՀՀ դրամը պետք է վճարի ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների համար բազմաբնակարան շենքերի կառուցման նպատակով տրամադրվելիք գումարի՝ իր շահույթից: Վահե Յաքուբյանն ասել է, որ «վերևները տեղյակ են, ամեն ինչ նորմալ է, պայմանավորվածությունները ձեռք են բերվել բարձր մակարդակով, ինքն էլ մասնակցում է այնքանով, որ նշված դատավարության խնդիրները լուծվի», ՀՀ կառավարության որոշմամբ անշարժ գույքերի գինը նշվել է ուռճացված, քանի որ այդ հանգամանքը անհրաժեշտ է եղել Անգլիայի դատարանում ընթացող դատավարության համար՝ ի օգուտ ՀՀ որոշում կայացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված:

Բացի այդ, Վահե Յաքուբյանն ասել է նաև, որ ՀՀ կառավարության որոշման մեջ ներդրումային ծրագրի մասին ևս նշվել է, որ այդ փաստը դատարանում կարողանա օգտագործել՝ ի օգուտ ՀՀ:

Վահե Յաքուբյանին առաջարկել է ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված պարտավորությունների կատարման ժամկետներում կատարել փոփոխություն: Նույնիսկ կառավարության որոշման մեջ փոփոխություն կատարելու նախագիծ է կազմել ու ներկայացրել նրան, սակայն վերջինի կողմից այդ ուղղությամբ որևէ քայլ չի կատարվել: Այդ նախաձեռնությունը քննարկել է նաև ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Պավել Շադյանի հետ, սակայն նրա կողմից ևս որևէ միջոց չի ձեռնարկվել:

«Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությունում աշխատել են մեկ հաշվապահի և մի քանի պահակներ:

2014 թվականի սկզբին հասկացել է, որ ընկերության հետ հույսեր կապելն անիմաստ է և սկսել է նոր աշխատանք փնտրել: Վահե Յաքուբյանը և Էդուարդ Մելիքյանն առաջարկել են աշխատանքի ընդունվել իրենց պատկանող այլ ընկերություններից որևէ մեկում, սակայն հրաժարվել է: Նույն թվականի նոյեմբերին աշխատանքից ազատվել է:

32) ՀՀ երրորդ նախագահ Սերժ Ազատի Սարգսյանի ցուցմունքով այն մասին, որ տեղյակ է եղել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Դողագործ» ընկերությունը գնելու և հետագայում այն «Գլենդել Հիլզ» ընկերությանն օտարելելու մասին: Մինչ այդ, «Դողագործ», այնուհետև վերակազմակերպված «Ջեներալ Տրանսուորլդ ՄՔ» ՓԲ ընկերությունը դիմել է Լոնդոնի արբիտրաժային դատարան և Հայաստանի Հանրապետությունից «աստղաբաշխական» գումար պահանջել: Բնականաբար ՀՀ կառավարությունը միջոցներ է ձեռնարկել՝ պայմանագիր է կնքվել իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերության հետ, որը ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունը: Արդյունքում վեճը լուծվել է ի օգուտ Հայաստանի Հանրապետության, ինչի հետևանքով ընկերությունը դարձել է Հայաստանի Հանրապետության սեփականությունը: Գործարար Վահե Յաքուբյանին ճանաչել է, բայց վերջինիս հետ մոտ հարաբերություններ չի ունեցել: Չի հիշում, թե երբ և ինչ հանգամանքներում է ծանոթացել նրա հետ: Չի բացառում, որ 2008-2018 թվականներին, երբ զբաղեցրել է ՀՀ նախագահի պաշտոնը, նախագահի նստավայրում Վահե Յաքուբյանն այցելած լինի իրեն, սակայն թե երբ և ինչ նպատակով, չի հիշում: Տարեվերջին նախագահակում հավաքվել են մի շարք անձինք, այդ թվում՝ գործարարներ, ուստի, չի բացառում, որ նա ևս ներկա է եղել տարեվերջյան միջոցառմանը:

Չի բացառում, որ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը խնդրո առարկա անշարժ գույքերի ձեռքբերման նպատակահարմարության վերաբերյալ իր հետ քննարկումներ ունեցել լինի: ՀՀ պաշտպանության նախարարության գործառույթները բազմազան են, այդ թվում՝ ՀՀ պաշտպանության նախարարության ակտիվների ավելացում, ինչպես նաև ՀՀ ՊՆ այլ կարիքների համար գույքի ձեռքբերում: Հիշյալ անշարժ գույքերը ձեռքբերելու խնդրանքով Վահե Յաքուբյանը կամ այլ անձինք ՀՀ կառավարություն դիմել են, թե՝ ոչ, չի հիշում: ՀՀ պաշտպանության նախարարության կողմից անշարժ գույքերը «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությանն օտարելու վերաբերյալ պայմանագրում ամրագրված դրույթներից տեղյակ չի եղել:

Նշել է նաև, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության եզրակացության բացակայության պայմաններում ՀՀ վարչապետին և կառավարության անդամներին չի հանձնարարել համաձայնություն տալ և կողմ քվեարկել ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 112-Ա որոշման նախագծի օգտին:

Վահե Յաքուբյանին պատկանած «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության կողմից ՀՀ ՊՆ հանդեպ պարտավորությունները չկատարելու պայմաններում դատական պաշտպանության կամ իրավական ներգործության այլ միջոցների դիմելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը 2012-2016 թվականներին իր հետ քննարկումներ չի ունեցել:

Տեղյակ չէ, թե խնդրո առարկա գործարքների հետ ՀՀ զինվորական նախկին դատախազ Գևորգ Կոստանյանն առնչություն ունեցել է, թե՝ ոչ:

Սերժ Սարգսյանը հերքել է նաև խնդրո առարկա գույքերի փոխարեն Վահե Յաքուբյանին պատկանած «Մետաքս» ԲԲ ընկերության տարածքը ՀՀ պաշտպանության նախարարությանը տրամադրելու վերաբերյալ իր կողմից որոշում կայացնելու հանգամանքը:

33) ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Մուշեղի Օհանյանի ցուցմունքով այն մասին, որ 2008 թվականի ապրիլից մինչև 2016 թվականի հոկտեմբերը զբաղեցրել է ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը: ՀՀ կառավարության ղեկավարության կողմից հանձնարարություն կամ առաջարկություն է եղել, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը գնի նախկին անվադողերի գործարանը՝ պայմանով, որ հետագայում այն թանկ գնով օտարվի և շահույթն ուղղվի ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար: ՀՀ կառավարության պաշտոնատար անձի տվյալները, ումից ստացել է նման հանձնարարություն կամ առաջարկություն, չի հիշում: Իր հիշելով ՀՀ պաշտպանության նախարարության արտաբյուջետային միջոցներով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շուրջ 1,3 միլիարդ ՀՀ դրամով ձեռք է բերվել նշված անշարժ գույքը: Վաճառողի տվյալները չի հիշում: Ամիսներ անց ՀՀ կառավարության համապատասխան որոշման հիման վրա հիշյալ անշարժ գույքը շուրջ 8 միլիարդ ՀՀ դրամով օտարվել է «Նայթ Բրիջ» անվանմամբ ընկերությանը: Գնորդը վճարումները պետք է կատարեր մի քանի տարվա ընթացքում՝ պայմանագրով նախատեսված ժամանակացույցով: Ընկերությունն իր պարտավորությունները լիարժեք չի կատարել, որի վերաբերյալ խնդիրն իր և ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատու աշխատակիցների կողմից ՀՀ կառավարությունում բարձրաձայնվել է: Իր պաշտոնավարման ընթացքում նշված ընկերությունը ճանաչվել է սնանկ:

Վահե-Վասկեն Յաքուբյանին չի մտաբերում, նման տվյալներով անձի հետ չի շփվել:

Վերոհիշյալ գործարքը կատարելու վերաբերյալ հանձնարարություն իրեն կարող էին տալ հանրապետության նախագահը, կամ վարչապետը, կամ էլ վերջինների հանձնարարությամբ նրանց աշխատակազմերի ղեկավար պաշտոնյաները:

Սովորաբար գույք գնելու կամ վաճառելու վերաբերյալ պայմանագրերը մշակվել են պայմանագրի կողմերի փոխադարձ քննարկման արդյունքում: ՀՀ պաշտպանության նախարարության և «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» ՓԲ ընկերության միջև կնքված նախնական և հիմնական պայմանագրերի նախագծերը հավանաբար մշակվել են ՀՀ պաշտպանության նախարարության իրավաբանական վարչության և ընկերության պատասխանատու աշխատակիցների կողմից, սակայն չգիտի, թե կոնկրետ ում կողմից:

«Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» ՓԲ ընկերության կողմից վճարային պարտավորությունը չկատարելու համար դատական պաշտպանության դիմելու հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարության կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետ Աշոտ Գրիգորյանի՝ 2014 թվականի ապրիլի 22-ին իրեն հասցեագրված գրությունը «Կքննարկենք ՀՀ նախագահի հետ հետո կորոշենք» բովանդակությամբ մակագրվել է այն իրեն ներկայացնելու օրը:

Հիշյալ գրությունը հավանաբար մոռացության է մատնված եղել, և իրեն ուշ է ներկայացվել:

Քանի որ հիշյալ գրության վրա կատարել է «Կքննարկենք ՀՀ նախագահի հետ հետո կորոշենք» բովանդակությամբ մակագրություն, ապա կարծում է, որ նմսն քննարկում Սերժ Սարգսյանի հետ ունեցել է, սակայն, չի հիշում թե ինչ որոշում է կայացվել: Այդ հարցի կապակցությամբ քննարկումներ շատ են եղել նաև կառավարությունում, որի արդյունքում որոշվել է շարունակել բանակցությունները և ընկերությանը հնարավորություն տալ կատարել պարտավորությունը:

Չի հիշում դատական պաշտպանության դիմելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու վերաբերյալ իրեն հանձնարարություն տրվել է, թե՝ ոչ:

Սեյրան Օհանյանը նշել է նաև, որ «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» և «Թի Թի էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերությունները եղել են փոխկապակցված ընկերություններ: Իր հիշելով «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» ՓԲ ընկերության կողմից պարտավորությունը կատարելուց հետո, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինարարական աշխատանքներ կատարելու համար, ՀՀ պաշտպանության նախարարությունը պետք է ֆինանսավորեր «Թի Թի էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերությանը: Քանի որ «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» ՓԲ ընկերությունը պայմանագրային պարտավորությունը չի կատարել, ուստի, «Թի Թի էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերությանը ֆինանսավորում չի հատկացվել:

Քննության հետագա փուլերում Սեյրան Օհանյանը հրաժարվել է ցուցմունքներ տալուց:

34) ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի նախկին պետ Ալիկ Ռազմիկի Միրզաբեկյանի խորհրդական Պավել

Ասծատուրի Շադյանի՝ 2019 թվականի ապրիլի 15-ի ցուցմունքով այն մասին, որ 2009-2016 թվականներին հանդիսացել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի խորհրդականը, իսկ 2016 թվականից՝ մի քանի փակ բաժնետիրական ընկերություններում ՀՀ պաշտպանության նախարարության լիազոր ներկայացուցիչը: 2011 թվականի դեկտեմբերին Ալիկ Միրզաբեկյանն իրեն տվել է նախարարի կողմից տրված լիազորագիր և հանձնարարել է գնալ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարան և «Ջեներալ Տրանսուորլդ ՄՔ» ՓԲ ընկերության սնանկության վարույթի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության անունից մասնակցել այնտեղ կայանալիք՝ ընկերությանը պատկանող՝ Երևան քաղաքի Բագրատունյաց 81, 81/1 և Արին-Բերդի 3-րդ նրբանցքի 2/1 հասցեի անշարժ գույքերի օտարման աճուրդին՝ դրանց ձեռքբերման դիմաց առաջարկելով 1.310.000.000 (մեկ միլիարդ երեք հարյուր տասը միլիոն) ՀՀ դրամ: Սնանկության գործով կառավարիչը հանդիսացել է Կարեն Ասատրյանը: Աճուրդին այլ մասնակից չի ներկայացել: Կարեն Ասատրյանի հետ ստորագրել են պայմանագիր, համաձայն որի՝ անշարժ գույքերի ձեռքբերման գումարը ՀՀ պաշտպանության նախարարությունը պետք է վճարեր տարաժամկետ:

ՀՀ կառավարության՝ պետական գույքն օտարելու մասին 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 112-Ա որոշմամբ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ձեռքբերված հիշյալ անշարժ գույքերն ուղղակի վաճառքի ձևով 8.424.500.000 (ութ միլիարդ չորս հարյուր քսանչորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամով պետք է վաճառվեին «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությանը: Որոշման համաձայն՝ անշարժ գույքի արժեքը պետք է վճարվեր, ոչ ուշ, քան 2017 թվականի դեկտեմբերի 25-ը: Առաջին վճարումը՝ 1.310.000.000 ՀՀ դրամի չափով, պետք է կատարվեր պայմանագիրը կնքելու պահից 10 օրվա ընթացքում, երկրորդ վճարումը՝ 2.000.000.000 ՀՀ դրամի չափով, մինչև 2012 թվականի նոյեմբերի 1-ը, իսկ 2013 թվականից յուրաքանչյուր տարի՝ 1.000.000.000 ՀՀ դրամ, վերջին տարում՝ գումարի մնացած մասը: Գնորդը պարտավորվել է պայմանագիրը կնքելուց հետո՝ 1 ամսվա ընթացքում, իրականացնել 10.000.000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլարի չափով ներդրումներ, 6 ամսվա ընթացքում ապահովել 300 աշխատատեղ:

2012 թվականի օգոստոսի 2-ին, Ալիկ Միրզաբեկյանն իրեն հանձնարարել է գնալ ՀՀ զինվորական դատախազ Գևորգ Կոստանյանի մոտ: Նույն օրը գնացել է նրա մոտ, որտեղ գտնվել է նաև «Գլենդել Հիլզ» և «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությունների սեփականատեր Վահե Յաքուբյանը: Գևորգ Կոստանյանը, առանց որևէ բան քննարկելու, իրեն հանձնարարել է շտապ գնալ և «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության հետ կնքել պայմանագիր: Հաջորդ օրը գնացել է «Կենտրոն» նոտարական գրասենյակ և «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության տնօրեն Աշոտ Գոմցյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագիրը տեսել է նոտարական գրասենյակում, ընթերցել է այն, համեմատել ՀՀ կառավարության հիշյալ որոշման հետ և ստորագրել այն: Իր կարծիքով պայմանագրի բովանդակությունը նախապես համաձայնեցված է եղել ՀՀ

պաշտպանության նախարարության ղեկավարության հետ: Հակառակ դեպքում իրեն թույլ չէին տա ստորագրել այն: Թե պայմանագիրն ում կողմից է կազմվել, չգիտի:

Նույն օրը Գևորգ Կոստանյանը զանգահարել է[18] իրեն և հետաքրքրվել՝ կնքել են պայմանագիրը, թե՝ ոչ: 2012 թվականի սեպտեմբերի 3-ին նշված գույքերը հանձնել է ընկերությանը:

Դրանից հետո՝ նույն թվականին, ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարությանը վճարել է 403.000.000 (չորս հարյուր երեք միլիոն), իսկ 2013 թվականին՝ 300.000.000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ: Պայմանագրով նախատեսված մնացած գումարները չի վճարել: 2015 թվականի ապրիլի 29-ին ընկերությունը ճանաչվել է սնանկ:

Ուսումնասիրելով իր և ընկերության կողմից լիազորված Դերենիկ Գյոզալյանի միջև 2012 թվականի ապրիլի 23-ին կնքված նախնական պայմանագիրը՝ նշել է, որ դրանում իր ստորագրությունն է, սակայն դրա կնքման հետ կապված հանգամանքները չի հիշում:

35) ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի վարչական ապարատի ընդհանուր բաժնի պետ-ղեկավարի տեղակալ Արտակ Ալբերտի Աբրահամյանի ցուցմունքներով այն մասին, որ 2012 թվականին, երբ դեպարտամենտի պետ Ալիկ Միրզաբեկյանը գտնվել է արձակուրդում, նրա տեղակալ Վլադիկ Աշոտի Հովհաննիսյանի միջոցով ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Արա Նազարյանն իրեն կանչել է իր աշխատասենյակ, որտեղ գտնվել է մի տղամարդ, ով, ըստ Արա Նազարյանի՝ հանդիսացել է «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս» ՓԲ ընկերության ներկայացուցիչը: Արա Նազարյանն ասել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս» ՓԲԸ-ի միջև կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով ընկերությանն օտարվել է նախկին անվադողերի գործարանը և պետք է համաձայնագիր տրվի ընկերությանը, որ անշարժ գույքը գրավադրվի բանկում և ստացվելիք միջոցներով գործարանը շահագործվի: Ասել է նաև, որ այդ հարցերով զբաղվել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի խորհրդական Պավել Շադյանը, սակայն քանի որ վերջինը գտնվել է արձակուրդում, նախարարը տեղյակ է, ուստի ինքը պետք է տա համաձայնագիրը: Այդ ժամանակ է տեղեկացել, որ հիշյալ գործարանը պատկանել է ՀՀ պաշտպանության նախարարությանը: Արա Նազարյանը

---

[18] Գևորգ Կոստանյանի կողմից օգտագործված 055 97-77-77 հեռախոսահամարի մուտքային հեռախոսազանգերի վերծանումների զննությամբ պարզվել է, որ 2012 թվականի մարտի 6-ին՝ ժամը 13:36-ին, Պավել Շադյանն իր 077 41-14-27 հեռախոսահամարով զանգահարել է նրա հիշյալ հեռախոսահամարին և ունեցել 117 վայրկյան տևողության խոսակցություն: Գևորգ Կոստանյանի հեռախոսահամարը սպասարկվել է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում տեղակայված ալեհավաք կայանի ներքո:

Հատկանշական է, որ նույն օրը՝ ժամը 13:14-ին, երբ Գևորգ Կոստանյանի կողմից օգտագործված հիշյալ հեռախոսահամարը սպասարկվել է նշված ալեհավաք կայանի ներքո, <<Գլենդել Հիլզ>> ՓԲ ընկերության տնօրեն Էդուարդ Մելիքյանն իր 094 81-31-00 հեռախոսահամարով զանգահարել է Գևորգ Կոստանյանին և ունեցել 185 վայրկյան տևողության խոսակցություն: Բացի այդ, Պավել Շադյանի կողմից 13:36-ին հեռախոսազանգ ստանալուց հետո՝ ժամը 13:39-ին, Կոստանյանը զանգահարել է Էդուարդ Մելիքյանի նշված հեռախոսահամարին և ունեցել 6 վայրկյան տևողության խոսակցություն: Այնուհետև՝ ժամը 13:43-ին, Գևորգ Կոստանյանը կրկին հեռախոսազանգ է ստացել Մելիքյանից և ունեցել է 19 վայրկյան տևողության խոսակցություն: Դրանից հետո՝ 17:54-ին, Գևորգ Կոստանյանը ևս մեկ անգամ զանգահարել է Մելիքյանին՝ այս անգամ ունենալով 41 վայրկյան տևողության խոսակցություն:

Գործի համար հնարավոր նշանակություն ունեցող այլ հեռախոսազանգեր չեն ֆիքսվել, բացառությամբ այն հանգամանքի, որ 2013 թվականին և դրանից հետո ելքային և մուտքային հեռախոսազանգեր են ֆիքսվել Գևորգ Կոստանյանի և Սեյրան Օհանյանի (ֆիքսվել է նաև 2012 թվականի հեռախոսազանգերը), <<Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ>> ՓԲ ընկերության սեփականատեր Վահե Յաքուբյանի, տնօրեն Աշոտ Հովհաննիսյանի, <<Գլենդել Հիլզ>> ՓԲ ընկերության տնօրեն Էդուարդ Մելիքյանի, <<Էֆ Փի Դի Քամփնի>> ՍՊ ընկերության տնօրեն Արման Մելքումյանի կողմից օգտագործված հեռախոսահամարների միջև:

ներկայացրել է լիազորագիր, որով ինքը լիազորվել է հանդես գալ ՀՀ պաշտպանության նախարարության անունից: Արա Նազարյանի աշխատասենյակում ստորագրել է վերջինի կողմից ներկայացված համաձայնագիրը, որը ելքագրել է ու տվել նրան: Դրանից հետո կապվել է Պավել Շադյանի հետ, ով ևս պնդել է, որ համաձայնագիրը համաձայնեցված է ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հետ:

36) ՀՀ պաշտպանության նախարարի նախկին տեղակալ Արա Սուրենի Նազարյանի ցուցմունքներով այն մասին, որ 2007 թվականի հունիսի 27-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցրել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի պաշտոնը: Ֆունկցիոնալ պարտականությունները կայացել են հետևյալում.

ՀՀ պաշտպանության նախարարության իրավաբանական վարչության աշխատանքի համակարգում, ինչպես նաև օրենսդրական ակտերի ներկայացում ազգային ժողով և ՀՀ կառավարություն: 2008-2011 թվականներին համակարգել է նաև ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության, իսկ 2011-2017 թվականներին՝ ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության գործունեությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից անշարժ գույք ձեռքբերելիս կամ օտարելիս պետք է ներկայացվեին հստակ հիմնավորումներ այն մասին, որ անշարժ գույքի ձեռքբերումն անհրաժեշտ է պաշտպանական համակարգի կարիքների համար, ուստի, բովանդակային առումով պետք է ձևակերպվեր կարիքի բնույթն ու բովանդակությունը: Գույքի օտարման դեպքում ևս պետք է հիմնավորվեր, թե օտարվող գույքից ակնկալվող ինչ արդյունք է սպասվել:

Անշարժ գույքերի ձեռքբերման կամ օտարման գործընթացն իրականացվել է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի կողմից:

Խնդրո առարկա գործարքների վերաբերյալ որևէ հանգամանք չի հիշում:

Չի հիշում նաև ՀՀ կառավարության՝ 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 112-Ա որոշման կայացման հիմնավորումները: ՀՀ պաշտպանության նախարարի հանձնարարությամբ ՀՀ կառավարության նիստերին որպես կանոն մասնակցել է ինքը:

ՀՀ կառավարության՝ 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 112-Ա որոշմամբ ամրագրված, այդ թվում՝ գրավի իրավունքից հրաժարվելու վերաբերյալ դրույթները ՀՀ պաշտպանության նախարարության շահերի ապահովման տեսանկյունից չեն հանդիսացել իրական և գործուն երաշխիքներ:

Մինչ ՀՀ կառավարության կողմից որոշում կայացնելը որոշման նախագծի հիմնավորման մեջ պարտադիր պայման չի եղել ներդրումային ծրագրի առկայությունը, սակայն ճիշտ կլիներ, որ նախագծի ընդունման հիմնավորման մեջ ներառվեր ներդրումային ծրագրի դրույթի բովանդակությունը, գործարքից ակնկալվող արդյունքը:

Եթե կառավարության որոշմանը նախորդած ժամանակահատվածում ներդրումային ծրագիր չի եղել, ապա առնվազն դրա բովանդակությունը պետք է նախատեսված լիներ ՀՀ պաշտպանության նախարարության և «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» ՓԲ

ընկերության միջև կնքված պայմանագրին կից հավելվածում, որ վերջիվերջո պարզ լիներ, թե ինչ ներդրումային ծրագրի մասին է խոսքը:

Բացի այդ, նշել է նաև, որ անշարժ գույքը գրավադնելու թույլտվություն ստանալու համար «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության տնօրեն Աշոտ Գոմցյանի՝ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին հասցեագրված գրությունում պետք է հստակեցվեր, թե արդյոք գրավի դիմաց ստացվելիք միջոցները կոնկրետ ո՞ր ուղղությամբ պետք է ուղղվեին, իսկ եթե չի հստակեցվեր, ուստի, նման ձևակերպումը ենթադրաբար պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ տվյալ ընկերության պատասխանատու անձի և ՀՀ պաշտպանության նախարարի միջև եղել է բանավոր համաձայնություն:

Ինչ վերաբերում է Արտակ Աբրահամյանի ցուցմունքին, ապա հայտնել է, որ դրանում նշված, իր մասնակցությամբ տեղի ունեցած իրադարձությունը չի հիշում, սակայն չի բացառել այն: Նման իրադարձություն կարող էր տեղի ունենալ միայն ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հանձնարարությամբ:

37) ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի նախկին պետ-նախարարի տեղակալ Ալիկ Ռազմիկի Միրզաբեկյանի ցուցմունքներով այն մասին, որ նշված պաշտոնը զբաղեցրել է 2010-2016 թվականներին: Ֆունկցիոնալ պարտականությունները կայացել են հետևյալում.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար իրականացված գնումների գործընթացի կազմակերպումը և ռազմաարդյունաբերական վարչության գործունեության ղեկավարումը: Հանդիսացել է գնումների գործընթացի պատասխանատուն: Հաստատել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մրցութային կարգով ձեռքբերվելիք շարժական և անշարժ գույքերի վերաբերյալ շահագրգիռ ստորաբաժանումների կողմից ներկայացված պայմանագրերը:

Ինչ վերաբերում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Ջեներալ Տրանսուորլդ ՄՔ» ՓԲ ընկերությանը պատկանած՝ Երևան քաղաքի Բագրատունյաց 81, 81/1 և Արին-Բերդի նրբանցքի 2/1 հասցեների անշարժ գույքերի ձեռքբերման և դրանք «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությանն օտարելու գործընթացներին, ապա դրանց անմիջական մասնակցություն չի ունեցել: Լսել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը ձեռք է բերել հիշյալ անշարժ գույքերը, որոնք հետագայում օտարվել են: Տեղյակ չէ թե ում որոշմամբ և ինչ նպատակով են ձեռք բերվել գույքերը:

Հարցին, որ քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ 2011 թվականի դեկտեմբերին իր խորհրդական Պավել Շադյանին տվել է ՀՀ պաշտպանության նախարարի կողմից տրված լիազորագիրը և հանձնարարել, որ գնա Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարան և ՀՀ պաշտպանության նախարարության անունից հանդես գալով մասնակցի սնանկ ճանաչված «Ջեներալ Տրանսուորլդ ՄՔ» ՓԲ ընկերությանը պատկանած անշարժ գույքերի աճուրդին, ինչպե՞ս կպարզաբանի, Ալիկ Միրզաբեկյանը պատասխանել է, որ չի բացառում, որ ՀՀ պաշտպանության նախարարը լիազորագիրը տվել է իրեն և ինքն այն փոխանցել

է Պավել Շադյանին՝ կատարելով նախարարի բանավոր հանձնարարականը, սակայն գործարքից տեղյակ չի եղել: Պավել Շադյանն ազատ ելումուտ է ունեցել ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի մոտ և իր կարծիքով այդ գործարքի հետ կապված գործողությունների ընթացքը զեկուցել է անմիջապես նախարարին և նրանից էլ անմիջականորեն ստացել ցուցումներ: Այդ պատճառով էլ չի առնչվել այդ գործարքին և դրա հետ կապված իրեն որևէ հանձնարարական չի տրվել: Եթե հանձնարարականն իրեն տրված լիներ, ապա բնականաբար տեղեկացված կլիներ և գործարքն էլ կկնքվեր իր անունից՝ որպես պաշտպանության նախարարության ներկայացուցիչ: Իր պաշտոնավարման ընթացքում գնումների հետ կապված բոլոր գործարքները հիմնականում կնքվել են իր կողմից: Չգիտի թե ինչու այդ գործարքի կատարումը իրեն չի հանձնարարվել:

Պավել Շադյանին 2012 թվականի օգոստոսի 2-ին ՀՀ զինվորական նախկին դատախազ Գևորգ Կոստանյանի մոտ գնալու մասին հանձնարարությունը տվել է հավանաբար վերջինիս խնդրանքով: Չի հիշում թե ինչ հանգամանքով է դա պայմանավորված եղել:

«Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.02.2015թ. վճռով «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» ՓԲ ընկերությունը, որը ՀՀ պաշտպանության նախարարությունից գնել էր «Ջեներալ Տրանսոտրլդ» ՄՔ ՓԲԸ-ի անշարժ գույքը (նախկին «Ավտոդողագործ») 8 424 500 000 դրամով, ճանաչվել է սնանկ: Այդ գումարից ընկերությունը ՀՀ ՊՆ-ին վճարել է 703 մլն դրամ: Գնված անշարժ գույքը ընկերությունը գրավադրել է «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերությանը և ստացել տարեկան 12% տոկոսադրույքով 4 201 375 ԱՄՆ դոլարի չափով վարկային միջոցներ:

Բանկը 07.12.2015թ. թիվ J-3447 գրությամբ դիմել է «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Կ.Ասատրյանին վարկատուին («Կոնվերս բանկ» ՓԲԸ) թույլատրելու գրավադրված անշարժ գույքը օտարելու «Պրոջեքտ» ՍՊԸ վարկային պարտավորությունների կատարման ապահովման համար:

«Ըստ ՀՀ վարչապետի խորհրդական Հայկ Դավթյանի հետ ունեցած հեռախոսազրույցի՝ ՀՀ նախագահի մոտ տվյալ հարցի քննարկումից հետո որոշվել է փոխարենը ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացնել ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնքի, Սեբաստիա փ.37/1 հասցեում գտնվող «Մետաքս» ԲԲԸ-ն: Ընկերության տարածքը կազմում է 1,46199 հա իր շինություններով, որը կազմում է 25399,4 քառ.մ.: Խնդրում եմ Ձեր որոշումը» գրության վերաբերյալ Ալիկ Միրզաբեկյանը հայտնել է, որ նման տվյալներ գրելու համար ձեռքի տակ պետք է ունենար անհրաժեշտ փաստաթղթեր, սակայն իր ղեկավարած դեպարտամենտում այդպիսիք չեն եղել, այլապես կհիշեր:

ՀՀ վարչապետի խորհրդականի հետ կայացած հեռախոսազրույցի վերաբերյալ որևէ հանգամանք չի հիշում, և հետ փոխնախարարի մակարդակով հեռախոսազրույց ունենալ չէր կարող:

Ալիկ Միզաբեկյանը, ուսումնասիրելով «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս էյ էմ» ՓԲ ընկերության սնանկության վարույթի ընթացքում՝ 2015 թվականի դեկտեմբերի 11-ին, Պավել Շադյանի անվամբ տվված լիազորագիրը, պատասխանել է, որ թե դրանում առկա ստորագրությունն իրենն է, սակայն այդ կապակցությամբ որևէ հանգամանք չի հիշում, Նման լիազորագիր ստորագրելու ցուցում իրեն կարող էր տալ միայն ՀՀ պաշտպանության նախարարը:

38) ՀՀ պաշտպանության նախարարության կոմունալ շահագործման (ԿՇ) և զորքերի բնակավորման (ԶԲ) վարչության նախկին պետ Աշոտ Բենիկի Գրիգորյանի ցուցմունքներով այն մասին, որ նշված պաշտոնը զբաղեցրել է 2010 թվականի հոկտեմբերից մինչև 2018 թվականի հուլիսն ընկած ժամանակահատվածում: Ինչպես ֆինանսական, սոցիալական ապահովման, այնպես էլ ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունների պետերի անմիջական վերադասը հանդիսացել է ՀՀ պաշտպանության նախարարը: Վարչության աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականությունները կայացել են հետևյալում.

ՀՀ ԶՈՒ զորքերի բնակկենցաղային պայմանների ապահովում և բարելավում, այդ թվում՝ վառելիքաէներգետիկ ռեսուրսների, զորանոցագրասենյակային գույքի և կահույքի ապահովում, շենքային (ընթացիկ նորոգում, կապիտալ վերանորոգում և շինարարություն), ինչպես նաև կոմունալ պայմանների բարելավում:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից անշարժ գույքեր հիմնականում ձեռք են բերվել զինվանների տեղակայման, գոյություն ունեցող զինվանների ընդլայնման, սպաների համար պետական միջոցներով ինչպես նորակառույց շենքերի կառուցման, այնպես էլ կիսակառույց շենքերի վերակառուցման նպատակով: Անշարժ գույքերի ձեռքբերման դեպքում այլ նպատակ չի եղել:

ՀՀ պաշտպանության նախարարությանը պատկանած անշարժ գույքերը ՀՀ պաշտպանության նախարարի թույլտվությամբ, ՀՀ կառավարության համապատասխան որոշումների հիման վրա, օտարվել կամ տեղական ինքնակառավարման մարմիններին փոխանցվել են այն դեպքում, երբ տարբեր պատճառներով զինվաններն այլևս չեն շահագործվել: Այլ կերպ դրանք չեն օտարվել:

Ինչ վերաբերում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Ջեներալ Տրանսուորլդ ՄՔ» ՓԲ ընկերության սնանկության վարույթի ընթացքում՝ 2011 թվականի դեկտեմբերի 12-ին, կայացած աճուրդին մասնակցելուն, հաղթող ճանաչվելուն և 1.310.000.000 ՀՀ դրամով նույն թվականի դեկտեմբերի 16-ին ընկերությանը պատկանած՝ Երևան քաղաքի Բագրատունյաց 81, 81/1 և Արին Բերդ 3-րդ նրբանցք 2/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերը ձեռքբերելուն, ապա նշել է, որ դրա վերաբերյալ իրեն որևէ հանգամանք հայտնի չէ: Նշված անշարժ գույքերը ՀՀ պաշտպանության նախարարի հանձնարարականով իր ղեկավարած վարչությունում պետք է հաշվառվեին, սակայն չեն հաշվառվել: Դրանց հաշվառումը մտել է իր ղեկավարած վարչության գործառույթների մեջ:

Բացի այդ, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից անշարժ գույքերի ձեռքբերման անհրաժեշտության դեպքում ՀՀ պաշտպանության նախարարի կողմից

ստեղծվել է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել են համապատասխան մասնագետներ, այդ թվում՝ ՀՀ ՊՆ ԿԾ և ԶԲ վարչությունից: Նախարարի կողմից նման հանձնարարական տալիս նշանակվել է նաև հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի նախագահ նշանակելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի աշխատակազմի կողմից կազմվել է հրամանի նախագիծ, որը նախարարի կողմից ստորագրվելուց հետո հանձնարարականներով իջել է համապատասխան վարչություններ: Հանձնաժողովի նախագահ նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարարի, ՀՀ ԶՈՒ ԳԾ պետի տեղակալներից կամ վարչության պետերից մեկը:

Նման դեպքերում, հանձնաժողովի կազմ ձևավորելու համար մասնագետներ ներգրավելու նպատակով նախարարի աշխատակազմի ղեկավարի կողմից գրություններ են հասցեագրվել համապատասխան վարչությունների (այդ թվում՝ դեպարտամենտ) պետերին: Վերջինների, այդ թվում՝ իր կողմից ներկայացվել է համապատասխան մասնագետ:

Անշարժ գույքերն իր ղեկավարած վարչությունում պետք է հաշվառվեին նաև այն պատճառաբանությամբ, որ առուվաճառքի պայմանագրին կից կազմվել են հանձնման-ընդունման ակտեր, որոնցում իրենց վարչության աշխատակցի կողմից նշվել են շենք-շինությունների և կոմունիկացիոն համակարգերի փաստացի տեխնիկական վիճակի վերաբերյալ տվյալներ: Այդ անհրաժեշտությունը պայմանավորված է եղել նաև այն հանգամանքով, որ իրենց վարչության կողմից է հետագայում որոշվել շենք-շինությունների նպատակային օգտագործումը:

Թե ինչ պատճառով խնդրո առարկա անշարժ գույքերը ձեռքբերելու գործընթացում իր ղեկավարած վարչությունից մասնագետ չի ներգրավվել, դրանք իրենց վարչությունում չեն հաշվառվել և դրանց վերաբերյալ իրեն հանձնարարական չի եղել, չգիտի, սակայն պնդել է, որ նշված ընթացակարգի պահպանումը կրել է պարտադիր բնույթ:

2012 կամ 2013 թվականին, իր աշխատասենյակ է գնացել «Գլենդել Հիլզ» ՓԲ ընկերության տնօրեն Էդուարդ Մելիքյանը և հետաքրքրվել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվելիք բնակարանաշինության ծրագրերից: Ցանկություն է հայտնել որպես կապալառու կազմակերպության ներկայացուցիչ մասնակցելու ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվելիք բնակարանաշինության աշխատանքներին, հետաքրքրվել է բնակարանաշինության գներից: Էդուարդ Մելիքյանին տեղեկացրել է, որ գները փոփոխական են, մեկ քառակուսի մետրի արժեքը՝ կախված շենքի հարկայնությունից, տատանվել է իր հիշելով 157.000 (հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամից մինչև առավելագույնը 210.000 (երկու հարյուր տասը հազար) ՀՀ դրամի սահմաններում: Նրան ասել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը տարեկան պատվիրում է մոտ 3.000.000.000 (երեք միլիարդ) ՀՀ դրամի բնակարանաշինություն և եթե ցանկանում է, ապա գնումների մասին օրենքին համապատասխան կարող է մասնակցել մրցութային գործընթացին: Պետական միջոցներով «Գլենդել Հիլզ» կամ դրա հետ փոխկապակցված «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերությունների կողմից ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների համար 50,000,000,000 (հիսուն միլիարդ) կամ 80,000,000,000

(ութսուն միլիարդ) ՀՀ դրամ արժողության բնակարանաշինական ծրագիր իրականացնելու մասին իր և Էդուարդ Մելիքյանի միջև քննարկում չի եղել: Էդուարդ Մելիքյանի հետ հանդիպման մասին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը տեղյակ եղել է, թե՝ ոչ, չի հիշել, սակայն նրա, այդ թվում՝ Էդուարդ Մելիքյանի մասնակցությամբ, մոտ վերոգրյալի կապակցությամբ քննարկում չի ունեցել:

ՀՀ կառավարության՝ 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 112-Ա որոշման հիման վրա ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հիշյալ անշարժ գույքերը «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությանը 8.424.500.000 ՀՀ դրամով օտարելու վերաբերյալ գործարքից և դրանում նշված ներդրումային ծրագրից տեղյակ չի եղել, սակայն եթե ՀՀ կառավարության՝ 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 112-Ա որոշմամբ նշված ներդրումային ծրագիրը կապված է եղել զորքերի բնակավորման խնդիրների ապահովման հետ, ապա այն պետք է ուղարկվեր ՀՀ ՊՆ ԿԾ և ՋԲ վարչություն՝ հետագա ծրագրերում պլանավորելու համար: Իր պաշտոնավարման ընթացքում նման ներդրումային ծրագիր կամ ծրագրի նախագիծ իրենց վարչությունում չի ստացվել:

Խնդրո առարկա անշարժ գույքերի վերաբերյալ իր կողմից ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետին 2014 թվականի մարտի 20-ին հասցեագրված հիշյալ բովանդակության գրությունը չի հիշում:

Ինչ վերաբերում է իր կողմից ՀՀ պաշտպանության նախարարին 2014 թվականի ապրիլի 22-ին հասցեագրված՝ վերոհիշյալ բովանդակության գրությանը, ապա հայտնել է, որ հաշվի առնելով, որ անշարժ գույքի հաշվառման և շարժի հետ կապված բոլոր գրությունները գրվել են ՀՀ ՊՆ ԿԾ և ՋԲ վարչության կողմից, ուստի, այդ իսկ պատճառով, ենթադրաբար իրավաբանական և ֆինանսաբյուջետային վարչությունները գործարքների վերաբերյալ նախարարին գրավոր, պաշտոնական կարգով զեկուցել են իրենց վարչության միջոցով և քանի որ նախարարին գրություն հասցեագրելու իրավասություն իրենց վարչությունում ունեցել է միայն ինքը, ուստի, տվյալ վարչություններից ստացված գրություններում առկա տվյալները համադրվել, միացվել են միմյանց և մեկ ընդհանուր գրությամբ ուղարկվել ՀՀ պաշտպանության նախարարին:

Տվյալ գրության հետ առկա մակագրման թերթիկում նշված «Ա.Ավետիսյանին՝ հանձնի ՖԲ, ես տեղյակ չեմ», «Ի գիտություն» տպագիր գրառումները վկայում են այն մասին, որ տվյալ գրության պատասխանատուն հանդիսացել է ՀՀ ՊՆ ՖԲ և Պ վարչությունը, ուստի, գրությունն ինքը չի զեկուցել նախարարին, այլ վերջինին ենթադրաբար այն զեկուցվել է ՀՀ ՊՆ ՖԲ և Պ վարչության պետ Վաղարշակ Ավետիսյանի կողմից:

Ինչ վերաբերում է ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի և Վահե Յաքուբյանին պատկանած «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերության տնօրեն Հովհաննես Աբրահամյանի միջև 2012 թվականի ապրիլի 19-ին կնքված՝ 3.889.216.000 (երեք միլիարդ ութ հարյուր ութսունինը միլիոն երկու հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ արժողության շինարարական աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ պետական գնման մասին թիվ 1 պայմանագրին, ապա նշել է, որ քանի որ շինարարությունների վերաբերյալ բոլոր գործառույթները պարտադիր անցել են իրենց վարչությունով, ուստի,

նման դեպքերում իրենց վարչության կողմից անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը ներկայացվել է գնումների դեպարտամենտ՝ գնումների մասին օրենքով մրցույթ անցկացնելու և հաղթող որոշելու համար: Եթե տվյալ դեպքում ֆինանսավորումը եղել է այլ աղբյուրներից, ապա հնարավոր է, որ կազմակերպության հետ պայմանագիր կնքվեր առանց մրցույթ հայտարարելու: Բոլոր դեպքերում, որպես պատասխանատու ստորաբաժանում, հանդիսացել է իրենց վարչությունը, սակայն նշված պայմանագրից տեղյակ չէ, դրա հետ կապված իրենց վարչության կողմից որևէ գործառույթ չի իրականացվել: Չգիտի թե այդ գործընթացին իրենց վարչությունն ինչ պատճառով չի ներգրավվել:

39) ՀՀ պաշտպանության նախարարության իրավաբանական վարչության նախկին պետ Սեդրակ Գերասիմի Սեդրակյանի ցուցմունքով_այն մասին, որ նշված պաշտոնը զբաղեցրել է 2001 թվականից մինչև 2017 թվականի փետրվարի 21-ն ընկած ժամանակահատվածում:

Վարչության աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականությունները կայացել են հետևյալում.

ՀՀ կողմից կամ պաշտպանության նախարարության մասնակցությամբ կնքվելիք պայմանագրերի իրավական փորձաքննության կատարում, առաջարկությունների ներկայացում, պաշտպանության նախարարության դատաիրավական շահերի պաշտպանություն՝ հանդես գալով ինչպես պաշտպանության նախարարության, այնպես էլ պաշտպանության նախարարության ծառայողների և նրանց ընտանիքի անդամների ներկայացուցիչ, ՀՀ պաշտպանության նախարարի, նրա տեղակալների, մասամբ՝ գլխավոր շտաբի պետի հրամանների իրավական փորձաքննության կատարում, հարկ եղած դեպքում՝ առաջարկությունների ներկայացում: Իր գործառույթը կայացել է վերոգրյալ պատշաճ կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելը:

Խնդրո առարկա գործարքներից տեղյակ չէ, բացառությամբ այն հանգամանքի, որ շուրջ 10 տարի առաջ Պավել Ասծատուրի Շադյանից բանավոր կարգով տեղեկացել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը գնել է Երևանի անվադողերի գործարանը և որոշ ժամանակ անց վաճառել այն: Գործարքների վերաբերյալ իրեն այլ հանգամանքներ հայտնի չեն:

ՀՀ պաշտպանության նախարարությանը վերաբերելի՝ ՀՀ կառավարություն ներկայացվելիք որոշումների նախագծերը կազմվել են այն վարչությունների կողմից, որոնք հանդիսացել են տվյալ ոլորտի պատասխանատուն: Բոլոր դեպքերում, անկախ այն հանգամանքից, թե պատասխանատուն եղել է իրավաբանական վարչությունը, թե՝ ոչ, իրենց կողմից նախագծերն ուսումնասիրվել են այն դեպքում, երբ անհրաժեշտ է եղել իրենց պաշտոնական կարծիքը: Նման նախագծերում իրավաբանական վարչության աշխատակիցների կողմից եղել է դիրքորոշում՝ համաձայն են տվյալ նախագծին, թե՝ ոչ, իսկ եթե ոչ, ապա ինչ առարկություններով: Առարկությունները կցվել են պայմանագրին և վերադարձվել պատասխանատու ստորաբաժանմանը:

Տվյալ դեպքում, կարծիք տալու համար ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծն իրավաբանական վարչություն ներկայացվել է, թե՝ ոչ, չի հիշում,

սակայն հիշում է, որ իրենց վարչության աշխատակիցների կողմից դրա հիման վրա կազմված պայմանագիր չի ուսումնասիրվել: Սովորաբար անշարժ գույքերի ձեռքբերման և օտարման նախաձեռնող վարչությունը հանդիսացել է ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունը: Նման գործարքների կատարմամբ հիմնականում զբաղվել է ՀՀ ՊՆ ռազմարդյունաբերության վարչության նախկին պետ, այնուհետև ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետ Ալիկ Միրզաբեկյանի խորհրդական Պավել Շադյանը:

ՀՀ կառավարության՝ 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 112-Ա որոշման հիման վրա ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից լիազորված՝ ՀՀ ՊՆ տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի խորհրդական Պավել Շադյանի ու «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության տնօրեն Աշոտ Գոմցյանի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի հիմնական պայմանագրի դրույթների, այդ թվում՝ գրավի իրավունքը զիջելու վերաբերյալ, հայտնել է, որ նման բովանդակության պայմանագրի դրույթները չէին կարող նպաստել, որ ՀՀ պաշտպանության նախարարությունն առնվազն իրավաբանորեն հիմքեր ունենար վերականգնելու իր ենթադրյալ խախտվելիք իրավունքները, իսկ սնանկության պարագայում՝ հանդիսանար որպես ապահովված պարտատեր: Եթե խոսքը վերաբերում է պետության շահերին և միջոցներին, ապա պետք է կիրառվելիք դրույթները նպաստեն պետության իրավունքների ենթադրյալ խախտումների բացառմանը և պետության խախտված իրավունքների վերականգնմանը: Պայմանագիրն իր և ենթադրաբար նաև իր ղեկավարած վարչության իրավաբանների կողմից չի ուսումնասիրվել, հակառակ դեպքում վերը նշված մտահոգությունները գրավոր կամ բանավոր կարտահայտվեր:

Իր կողմից ՀՀ պաշտպանության նախարարության ԿՇ և ԶԲ վարչության պետ Աշոտ Գրիգորյանին 2014 թվականի մարտի 26-ին հասցեագրված վերոհիշյալ բովանդակության գրության վերաբերյալ հայտնել է, որ եթե նման բովանդակության գրություն է հասցեագրել և այն մակագրել Եսաֆյանին, ապա դա նշանակում է այդ գործընթացով իրենց վարչությունից զբաղվել է պատասխանատու պաշտոնատար անձը՝ տվյալ դեպքում իրավաբանական վարչության դատահիրավական բաժնի պետ, ներկայում նույն վարչության պետի տեղակալ Վիգեն Եսաֆյանը: Գրությունը և դրա բովանդակությունը չի հիշում, քանի որ այն ենթադրաբար կազմվել է Եսաֆյանի կողմից, հաստատվել է ստորագրությամբ և ուղարկվել նշված պաշտոնատար անձին:

Նույնը պնդել է ՀՀ ՊՆ կոմունալ շահագործման և զորքերի բնակավորման վարչության պետ Ա.Գրիգորյանի կողմից 2014 թվականի մարտի 20-ին իրեն հասցեագրված, 2014 թվականի մարտի 26-ին և ապրիլի 9-ին իր կողմից ՀՀ ՊՆ գլխավոր ֆինանսիստ-ՖԲ և Պ վարչության պետ Վաղարշակ Ավետիսյանին հասցեագրված գրությունների կապակցությամբ:

40) ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր ֆինանսիստ, ֆինանսաբյուջետային և պլանավորման վարչության նախկին պետ Վաղարշակ Նորիկի Ավետիսյանի ցուցմունքով այն մասին, որ նշված պաշտոնը զբաղեցրել է 2008-2018 թվականներն ընկած ժամանակահատվածում:

Վարչության աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականությունները կայացել են հետևյալում.

ՀՀ պաշտպանության նախարարության ֆինանսական (բյուջետային) հոսքերի կառավարում, բյուջետային գործընթացի կազմակերպում, հաշվետվությունների ներկայացում, պաշտպանության նախարարության համակարգի ֆինանսական ծառայությունների ընդհանուր ղեկավարում, հաշվառման վարման կազմակերպում, իրականացում և այլն:

Խնդրո առարկայի վերաբերյալ նշել է, որ շուրջ 10 տարի առաջ, հստակ տարեթիվը չի հիշում, երբ զբաղեցրել է հիշյալ պաշտոնը, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն իրեն հրավիրել է իր աշխատասենյակ: Աշխատասենյակում գտնվել է նաև մի անձ, ով ներկայացել է Վահե Յաքուբյան տվյալներով: Սեյրան Օհանյանն ասել է, որ առուվաճառքի իրականացման հնարավորություն կա և գործարքի կողմ հանդես գալու է նշված անձը կամ նրան պատկանող կամ նրա կողմից ղեկավարվող ընկերությունը: Գործարքի էությունը կայացել է նրանում, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը նշված անձին պետք է վաճառեր Երևանի նախկին անվադողերի գործարանը և հողամասերը, որոնք ՀՀ պաշտպանության նախարարությունը ձեռք էր բերել դրանից ամիսներ առաջ: Խնդրել է նշված անձին տրամադրել պաշտպանության նախարարության արտաբյուջետային բանկային հաշվեհամարները և ֆինանսական գործառույթներին վերաբերող այլ տվյալներ, այդ թվում՝ վճարման պայմաններ, ժամկետներ: Սեյրան Օհանյանի աշխատասենյակում կայացած խոսակցության վերաբերյալ այլ տվյալներ չի հիշում, բացառությամբ այն հանգամանքի, որ այդ խոսակցությանն իր հիշելով ներկա գտնվել է նաև պաշտպանության նախարարի տեղակալ Ալիկ Միրզաբեկյանի խորհրդական, նախկինում ՀՀ պաշտպանության նախարարության ռազմաարդյունաբերության վարչության պետ Պավել Շադյանը:

ՀՀ կառավարության՝ 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 112-Ա որոշումը և դրա հիման վրա ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից լիազորված՝ ՀՀ ՊՆ տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի խորհրդական Պավել Շադյանի ու «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության տնօրեն Աշոտ Գոմցյանի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի հիմնական պայմանագիրը չի հիշում:

Նշված ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու պայմաններում համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար իր կողմից ՀՀ պաշտպանության նախարարին կամ ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանման ղեկավարին գրավոր կարգով դիմելու հետ կապված հայտնել է, որ պարբերաբար, սովորաբար յուրաքանչյուր շաբաթ, նման խնդրահարույց գործարքների, ՀՀ պաշտպանության նախարարության հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնված ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից իրենց պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ իր կողմից ղեկավարված վարչության աշխատակից Վահան Բեգլարյանի կողմից կազմվել է համապատասխան տեղեկանք, որն անձամբ ներկայացվել է ՀՀ պաշտպանության

նախարար Սեյրան Օհանյանին, սակայն թե խնդրո առարկայի վերաբերյալ Սեյրան Օհանյանն ինչ դիրքորոշում է արտահայտել, չի հիշում:

«Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության՝ 2013 թվականի փետրվարի 2-ի 12/09 թվակիր գրությամբ ներկայացված առաջարկությունների վերաբերյալ իր ստորագրած և ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին 2013 թվականի փետրվարի 6-ին զեկուցված տեղեկանքի վերաբերյալ նշել է, որ այն հաստատապես ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին, սակայն, թե ինչ պատճառով տեղեկանքին ընթացք չի տրվել, չի հիշում: Եթե նման գրություն է հասցեագրել ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին, ուստի, խնդրո առարկայի վերաբերյալ հստակ արտահայտել է դիրքորոշումը և մտահոգությունները: Թե Պավել Շադյանի և այն ստորաբաժանումների ղեկավարների կողմից, որոնց նախարարը մակագրել է գրությունը, ինչ գործողություններ են կատարել, բանավոր կամ գրավոր դիրքորոշում արտահայտել են, թե՝ ոչ, չգիտի:

ՀՀ նախկին վարչապետի խորհրդական Հայկ Դավթյանին ճանաչել է և տարբեր հարցերով մշտապես կապի մեջ գտնվել նրա հետ, սակայն թե տվյալ հարցով ինքը կամ այլ ստորաբաժանումների ղեկավարները կամ պատասխանատու անձինք որևէ խոսակցություն ունեցել են նրա հետ, թե՝ ոչ, չի հիշում:

Նշել է նաև, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից խնդրո առարկա անշարժ գույքերի ձեռքբերման դիմաց վճարված և օտարման դիմաց ստացված գումարների միջև բացարձակ տարբերությունը կազմում է 607.000.000 (վեց հարյուր յոթ միլիոն) ՀՀ դրամ:

2012 թվականի ապրիլի 19-ին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի և «Թի Թի Էյ Քոնսալթինգ» ՓԲ ընկերության տնօրեն Հովհաննես Աբրահամյանի միջև կնքված՝ 3.809.216.000 (երեք միլիարդ ութ հարյուր ինը միլիոն երկու հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ արժողության բնակարանաշինական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պետական գնման № 1 պայմանագրի կապակցությամբ նշել է, որ նման պայմանագիր չի հիշում, սակայն նման պայմանագրեր կնքվել և վավեր են համարվել են միայն այն դեպքում, երբ մինչ դրանց կնքումն իր ղեկավարած վարչության աշխատակիցների կողմից կազմվել և նախարարի հաստատմանը ներկայացվել է ծախսերի նախահաշիվ, իսկ եթե նման նախահաշիվ չի եղել, ուրեմն ինչպես այդ, այնպես էլ ցանկացած այլ պայմանագիր վավեր լիներ չէր կարող:

41) 2007-2008 թվականներին ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման, իսկ 2008-2010 թվականներին ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Հենրիկի Երիցյանի ցուցմունքներով այն մասին, որ 2007 թվականի հունիսին, երբ զբաղեցրել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի պաշտոնը, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության իրավաբանական վարչության պետը զեկուցել է, որ Լոնդոնի արբիտրաժային դատարանից ՀՀ կառավարություն կամ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ծանուցում է ուղարկվել այն մասին, որ «Ջեներալ Տրանսուոլդ ՄՔ» ՓԲ ընկերության սեփականատեր Սարկիս Խրիմյանի կողմից Դատարան է ներկայացվել Հայաստանի Հանրապետությունից շուրջ 50 միլիոն ԱՄՆ

դոլար փոխհատուցում ստանալու պահանջի վերաբերյալ հայցադիմում: Ծանուցմամբ նշվել է նաև, որ եթե հայցադիմումին ՀՀ կառավարությունը չպատասխանի, ապա կկորցնի Դատարանում պաշտպանվելու իրավունքը: ՀՀ կառավարության կողմից այդ հարցով զբաղվելու իրավասությունը վերապահվել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությանը:

Քննարկվել է Հայաստանի Հանրապետության կողմից հակընդդեմ հայց ներկայացնելու հարցը, որի վերաբերյալ իրավաբանական վարչության աշխատակիցների մասնակցությամբ կայացել են բազմաթիվ խորհրդակցություններ: Այդ ընթացքում իրավաբանական վարչության պետից տեղեկացել է, որ ամերիկահայ իրավաբան Վահե Յաքուբյանը ևս զբաղվել է նշված հարցով:

Մասնավորապես՝ Վահե Յաքուբյանը խորհուրդ է տվել, որ Դատարանում ՀՀ կառավարության անունից հանդես գան ԱՄՆ-ի փաստաբանական գրասենյակներից մեկի փաստաբանները:

Դրանից հետո՝ 2007 թվականին, հեռախոսազրույցի միջոցով կամ հանդիպման եղանակով նշված հարցի հետ կապված խոսել է Վահե Յաքուբյանի հետ, ով իրեն է տվել ԱՄՆ-ում գործող փաստաբանական ընկերության պատասխանատու անձի կոնտակտային տվյալները՝ հավելելով, որ տվյալ անձը կարող է լավագույնս մատուցել նշված ծառայությունը: Վահե Յաքուբյանը պարբերաբար ասել է, որ նշված գործընթացին աջակցել է անվճար և նույն կերպ՝ անվճար խորհրդատվություն է մատուցել ՀՀ կառավարությանը:

Այնուհետև, իրավաբանական վարչության պետը կամ աշխատակիցներից մեկը կապվել է Վահե Յաքուբյանի մատնանշած անձի հետ, ով ասել է, որ փաստաբանական ծառայությունը կարող է մատուցվել միայն միջազգային ստանդարտներով նախատեսված ժամավճարներով:

Այդ հարցը քննարկել է ՀՀ կառավարությունում, այդ թվում՝ ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի հետ: Որոշվել է, որ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և ամերիկյան փաստաբանական ընկերության միջև պետք է կնքվի ծառայությունների մատուցման պայմանագիր: Մատուցվելիք ծառայությունների հստակ արժեքը չի հիշել: Նախնական հաշվարկներով այն կազմել է շուրջ 700-900,000 (յոթ հարյուրից ինը հարյուր հազար) կամ 1,000,000 ԱՄՆ դոլար:

Նախարարության իրավաբանական վարչության և ամերիկյան փաստաբանական ընկերության աշխատակիցների միջև կայացած բանակցությունների արդյունքում, ՀՀ կառավարության որոշման հիման վրա, Նախարարության ու Ընկերության միջև կնքվել է պայմանագիր: Վճարումները փաստաբաններին իր հիշելով էկոնոմիկայի նախարարության կողմից կատարվել են բանկային փոխանցումների եղանակով: Գործընթացի վերաբերյալ էկոնոմիկայի նախարարությունում եղել են մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ փաստաբանական ընկերության հետ կնքված պայմանագիրը, վճարման հանձնարարագրերը: Վահե Յաքուբյանն իր տվյալներով նշված գործով ֆինանսական աջակցություն չի ցուցաբերել, քանի որ փաստաբանական ծառայությունների դիմաց վճարումները կատարվել են ՀՀ պետական բյուջեի հաշվին:

Ընկերության փաստաբանների կողմից մատուցված ծառայությունների արդյունքում Լոնդոնի արբիտրաժային դատարանի որոշմամբ կամ որոշումներով ՀՀ դեմ ներկայացված հայցադիմումը կամ հայցադիմումները մերժվել են: Որոշումներն ուղարկվել են կամ ՀՀ կառավարություն կամ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Հետագայում՝ իր նախկին խորհրդական Էմմա Հակոբյանից տեղեկացել է, որ նշված գործընթացին որոշակի գործողություններ կատարել է նաև ՀՀ երրորդ նախագահի օգնական Գևորգ Կոստանյանը:

42) ՀՀ էկոնոմիկայի նախկին նախարար Ներսես Հենրիկի Երիցյանի խորհրդական Էմմա Ռոբերտի Հակոբյանի ցուցմունքով այն մասին, որ 2007-2011 թվականներին աշխատել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման, այնուհետև՝ վերակազմակերպված էկոնոմիկայի նախարարություններում՝ որպես նախարար Ներսես Երիցյանի խորհրդական: Նշված պաշտոնում 2007 թվականի հունիսին նշանակվելուց մի քանի ամիս անց նախարար Ներսես Երիցյանն իրեն հանձնարարել է համակարգել «Թի Էս Ինվեսթմենթ Քոռփ» ամերիկյան ընկերության կողմից ՀՀ կառավարության դեմ Լոնդոնի արբիտրաժային դատարանում ներկայացված հայցի ուղղությամբ նախարարության անունից ի շահ ՀՀ աշխատանքների կատարումը՝ համագործակցելով այդ գործով Հայաստանի Հանրապետությանը պայմանագրային վճարովի հիմունքներով ծառայություններ մատուցող ամերիկյան «Մանաթ Ֆելփս և Ֆիլիփս» ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) փաստաբանների հետ: Ըստ պայմանագրի՝ Ընկերության կողմից ծառայությունները մատուցվել են ժամավճարով՝ ներկայացվելիք հաշիվ-ապրանքագրերի հիման վրա: Իր հիշելով ամերիկյան ընկերության փաստաբաններին ընդհանուր առմամբ փոխանցվել է շուրջ 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար: Գումարները փոխանցվել են ՀՀ կառավարության մի շարք որոշումներով:

Ներսես Երիցյանն իրեն տրամադրել է Ընկերության փաստաբանների կոնտակտային տվյալները: Գործի մանրամասներին ծանոթանալու նպատակով Ներսես Երիցյանը հանձնարարել է կապ հաստատել Ընկերության փաստաբան Վահե Յաքուբյանի հետ՝ վերջինին տեղեկացնելով, որ նախարարության անունից հանդես է գալու ինքը: Վահե Յաքուբյանից տեղեկացել է, որ գործը վերաբերել է «Դողագործ-1», այնուհետև վերակազմակերպված «Ջեներալ Տրանսուոլդ ՄՔ» ՓԲ ընկերության սեփականատիրոջ կողմից ՀՀ կառավարությունից 50,000,000 (հիսուն միլիոն) ԱՄՆ դոլար փոխհատուցում ստանալու վերաբերյալ ՀՀ դեմ ներկայացված հայցին: Իր հիշելով նույն թվականի սեպտեմբերին, երբ ուսումնասիրել է նշված գործի վերաբերյալ փաստաթղթերը, Վահե Յաքուբյանի առաջարկով և նրա մասնակցությամբ Երևան քաղաքի «Անի» հյուրանոցի սրճարանում հանդիպել է ՀՀ ԱԺ պետահրավական հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանին և քննարկել են Լոնդոնի արբիտրաժային դատարանում հայկական կողմի պաշտպանության ստրատեգիայի և տակտիկայի վերաբերյալ հարցեր: Այդ ընթացքում Վահե Յաքուբյանի հետ պարբերաբար ունեցել է քննարկումներ, ով ասել է, որ հրաժարվել է իր մատուցած փաստաբանական ծառայությունների դիմաց վճարվել, քանի որ հայ է: Լոնդոնի արբիտրաժային դատարանում քննված գործի ընթացքում Վահե Յաքուբյանի կողմից

մատուցվել է փաստաբանական ծառայություն: Վահե Յաքուբյանը մասնակցել է նաև այդ գործով հայցադիմումի պատասխանի և մի շարք այլ փաստաթղթերի կազմմանն ու ներկայացմանը: Իր հիշելով Վահե Յաքուբյանը, Դավիթ Հարությունյանը, ՀՀ առևտրի և արդյունաբերության նախկին նախարար Կարեն Ճշմարիտյանը մասնակցել են նաև Լոնդոնում կայացած դատալսումներին:

Նույն թվականին Սարկիս Խրիմյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցելուց հետո քննարկումներ ունեցել է նաև ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գագիկ Ջհանգիրյանի, դատախազության՝ օտարերկրյա դատարաններում Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնող համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների, Գագիկ Ջհանգիրյանին փոխարինած՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Դանիելյանի, ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի, տվյալ քրեական գործի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացրած Բորիս Ղալեչյանի, քննիչ Անդրանիկ Թումաղայանի, իսկ 2008 կամ 2009 թվականներից սկսած նաև գործին ներգրավված՝ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի իրավական հարցերով օգնական Գևորգ Կոստանյանի հետ:

Քննարկումների արդյունքները պարբերաբար զեկուցել է նախարար Ներսես Երիցյանին: Չգիտի, թե Վահե Յաքուբյանն իր սեփական միջոցներից Ընկերության փաստաբաններին վճարումներ կատարել է, թե՝ ոչ:

2009-2010 թվականներից ճանաչել է նաև «Ջեներալ Տրանսուոլդ ՄՔ» ՓԲ ընկերության սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանին, ում հետ քննարկել է Լոնդոնի արբիտրաժային դատարան նրա անունից փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ հարցեր:

2010 թվականին Վահե Յաքուբյանն իրեն առաջարկել է փոխել աշխատանքը և ավելի բարձր վարձատրվող աշխատանք փնտրելու դեպքում դիմել իրեն: 2010 թվականի վերջին՝ Ներսես Երիցյանի պաշտոնավարումից հետո, հանդիպել է Վահե Յաքուբյանի հետ, ով Էդուարդո Էռնեկյանի բիզնեսներում աշխատանքի առաջարկներ է արել իրեն, որոնցից ընտրել է Էդուարդո Էռնեկյանին պատկանող «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերության խորհրդին կից զարգացման ծրագրերի հանձնաժողովի ղեկավարի պաշտոնը, որպիսի պաշտոնը զբաղեցրել է մինչև 2017 թվականի ապրիլը:

Իրենց համատեղ ջանքերի շնորհիվ իր հիշելով 2011 թվականի ապրիլին կամ մայիսին Վահե Յաքուբյանից տեղեկացել է, որ Լոնդոնի արբիտրաժային դատարանի կողմից կայացվել է որոշում, որով մերժվել է Սարկիս Խրիմյանի կողմից ՀՀ կառավարության դեմ ներկայացված հայցը:

43) ՀՀ նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանի ցուցմունքով այն մասին, որ երբ զբաղեցրել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի պաշտոնը, աշխատանքային գործունեությամբ պայմանավորված ճանաչել է «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերության իրավախորհրդատու Վահե Յաքուբյանին, ում հետ հարաբերությունները կրել են զուտ աշխատանքային բնույթ: ՀՀ պաշտպանության նախարարությանը պատկանած՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 81, 81/1 և Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի 3-րդ նրբանցքի 2/1 հասցեների անշարժ

գույքերը «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերությանն ուղղակի վաճառքով օտարելու թույլտվության տալու վերաբերյալ ՀՀ կառավարության՝ 2012 թվականի փետրվարի 12-ի թիվ 112-Ա որոշման կայացման հանգամանքները չի հիշում:

Նաև չի հիշում իր և ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի միջև «Նայթս Բրիջ Քոմունիքեյշնս Էյ Էմ» ՓԲ ընկերության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության հանդեպ ունեցած պարտավորությունները չկատարելու և այդ կապակցությամբ ընկերության դեմ դատական պաշտպանության կամ իրավական ներգործության այլ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ քննարկումներ տեղի ունեցել են, թե՝ ոչ:

Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու համար ՀՀ Ազգային ժողով դիմելու վերաբերյալ հսկող դատախազի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 96-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով,

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ո Ւ Մ Ե Մ՝

Տալ համաձայնություն ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ:

Աննա Կարենի Վարդապետյան